430
L III 3

Բաժանորդագին ԿԱՆԽԻԿ Թուրքիոյ համար տարեկան 50 ղրշ., Ռուսիոյ համար 5 ռուբլի. ուրիշ երկիրներու համար 12 ֆր։
Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին։
Գաւառներէն Օսմանեան նամակագրոշմ կ'ընդունուի՝ 1 ղրշ.նոցը 34 փարայի հաշուով, կամ 100 ղրուշի փոխարէն 115 ղրշ։
ԾԱՂԻԿի վերաբերեալ ամէն գործի համար դիմել՝
Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԴԱՃԵԱՆ
Պոլիս, Պահչէ-Գապու, Թաշ խան, թիւ 50

ԾԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

درعليه‌ده بغچه قپوسنده طاش خانده
٥٠ نومروده « زاغيك » غزتەسى مديرى
پالاقاشيان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա — Ազգային, Քաղաքական եւ Գրական — 40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 1 — ՇԱԲԱԹ — 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1891

ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԾԱՂԻԿի Տնօրէնութիւնը պատիւունի ծանուցանել իւր ընթերցողաց թէ, դոհացումն տալու համար այն խնդրանաց զոր յաճախ կ'ընդունի, հաստատած է Ցանձնակատարութեան Գրասենեակ *մը։*

Ցանձնակատարութեան Գրասենեակը կը հայթայթէ մեծ և փոքր քանակութեամբ ամէն տեսակ ապրանք թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հրապարակներէն գնելի, ինչպէս, գիրք ամէն լեզուաւ, պատկերք, ձայնագրութիւնք, դպրոցական և գրասենեկի պիտոյք, ժամացուցի, տպարանական և այլ արհեստական գործիք, կտաւեղէնք, ասուեղէնք, ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ կարասիք, և այլն, և այլն։

Վճարմունք կանխիկ են, բայց ի հարկին կարելի է պայմանաժամաւ եւս գործել այն տանց հետ որ կը ընտրեն արտադրիչներն ապահովել։ Փոխադրութեան ծախք կը պատկանին յաճախորդաց։

Ցանձնակատարութեան Գրասենեակը կ'ստանձնէ նաեւ վաճառումն ներքին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օտար հրապարակաց վրայ։ Առ այդ կը բաւէ ղրկել վաճառելի ապրանաց նմոյշները։

Ցանձնակատարութեան Գրասենեակը կը փափագի ունենալ թղթակիցներ գաւառական քաղաքներու մէջ։

Թղթակցութիւնք պէտք է ուղղուին առ Յ. Գ. Փալադաճեան, Կ. Պոլիս, Պահչէ գարու, Թաշ խան, Թիւ. 50։

FRATÉLLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԲԱՒԱՒՈՐ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՑ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՀԱՄԱՅՆ ԵՒՐՈՊ. ԹՈՒՐՔԻՈՅ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

ՖՐԱԹԷԼԼԻ ԿՈԼՏԷՆՊԵՐԿԻ

Այս վաճառատուն կը յանձնարարուի հասարակութեան և ամէն մրցման կրնայ դիմադրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբը, պատրաստութեան տոկունութեամբը, ինչպէս նաեւ հանդերձին դեղեցիկ կարուածքովը։

ԳԼԽԱՒՈՐ ՄԹԵՐԱՆՈՑՔ Ի Գ. ՊՈԼԻՍ

Թիւնէլի քով Թիւ 2, եւ Քարաքէօյի Կամուրջին Գլուխը Թիւ 28

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԱՍՆԱՃԻՒՂՔ

Հռոտոս, Քավալլա, Ռուսճուք, Զմիւռնիա, Վառնա, Պուրկաս, Փիլիպէ, Բոր-Սաիտ, Սելանիկ, Սամսոն, Մերսին, Քիոս, Թարսուս, Ատանա, Պէրութ, Դամասկոս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Աքէա, Ալեքսանտրիա, Դահիրէ, և այլն, և այլն։

ՔԱՈՒՉՈՒԿ ՄՈՒՃԱԿՆԵՐ
(ԼԱՍԹԻՔ)

ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՆՈՐԹ ՊՐԻԹԻՐԸ ԲԻՊԷՐ ԸՆԿԵԲՈՒԹԵԱՆ

Մեր յաճախորդներու փափաքանաց համաձայն, մեր այս տարուան քաուչուք մուճակներն (լաստիք) շինուած են Կ-դ- Բէրէ-ով, խիստ հռչակաւոր, նուրբ եւ հաստատուն։

Պոլսոյ հրապարակին վրայ երկար ատենէ ի վեր ճանչցուած է թէ մեր քաուչուք մուճակները կը գերազանցեն քսան տարիէ ի վեր գործածուած բոլոր մուճակները։

Մեր այս մուճակներու ներքին կողմը կշիռի մը և արտաքին կողմն ալ առլուծի մը պատկերը դրոշմուած է իբրեւ նշան։ Կը գտնուին բոլոր քաուչուք մուճակ վաճառողներու քով։ Կեդրոնատեղին է Ի Պոլիս, Պահչէ Գարու, Գօճաման Օղլու խան, Ճօրճի Կիտրոլի Թիւ 1 մթերանոցը։

"Ծաղիկ,,ի Ա. Տարին

ԾԱՂԻԿի Առաջին տարւոյ շրջանը, գեղեցիկ եւ հաստատուն կերպով կազմուած, կը վաճառւի ի գին 50 դրուշ։

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳԱՇԵՆԱԿԱՑ

ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

Վկայեալ գաշնակայարդար ԷՌԱՌի հռչակաւոր գործատան

—

Գնումն եւ վաճառումն

—

Փոխանակութիւն հին դաշնակաց հետ

—

Կը վաճառուին ամէն տեսակ դաշնակներ ամսական վճարմամբ և մասնաւորապես Գաղղիոյ լաւագոյն գործարաններէն Բէյնի դաշնակները, խիստ դիւրամատչելի գիներով։

—

Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն գործարանաց դաշնակներէն կը բերուին։

—

Վարձու նոր դաշնակներ չափաւոր գիներով։

Բաժանորդագրութիւն դաշնակաց յարդարման (accord):

—

ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑ

Դաշնակաց նորոգութեան, գաղղիական ընտիր նիւթերէններով։

ՀՐԱՀԱՆԳ դաշնակները շինելու և լաւագոյն վիճակի մէջ պահելու։

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք ամենայն խնամով և փութով կը կատարուին։

Աւելի մանրամասնութեանց համար դիմել Բերա, Մեծ-Փողոց, Ղալաթիա Սարայի դիմաց, Խրիսթաքի խան, թիւ 10։

Անմրցելի ածանութիւն

(1—30)

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

Վիեննայի երաժշտանոցէն ելած անուանի դաշնակահար։ մասնաւոր դասեր ստանձնելու համար կուտայ հեռաւոր հասցէն։ Բերա, Քոմանտիկէրի նուագարանաց վաճառատունը, կամ ԾԱՂԻԿի Խմբագրատունը, Պահչէ-Գապու, Թաշ խան, թիւ 50։

ՀԱՐՈՒՍՏ, ԲԱՅՑ ԱՂՔԱՏ

Որչափ մարդիկ կան այսօր որ հարիւրաւոր, հազարաւոր ոսկիներու տէր են առանց գիտնալու, և իրենք կ'ապրին աղքատութեան, խնդձութեան մէջ։ Մէկ կամ աւելի թուով արժէթղթեր գնած են տարիներ առաջ, Արեւելեան երկաթուղեաց բաժնեթղթեր օրինակի համար, կղզած պահած են մնուկին խորը, և ամենեւին չգիտեն թէ այդ բաժնեթղթեր որ և է դումար շահած է՞ն երկու ամիսը մի անգամ շարունակաբար քաշուող վիճակահանութիւններէն։ Այսպիսիներէ քանիներ անակնկալ կերպիւ հարուստ դառած են իրենք զիրենք, օրին մէկը ստուգել տալով իրենց բաժնեթղթոց շահած կամ չը շահած լինելը։

Ամէն մարդ կարդղ է իւր Արեւելեան երկաթուղեաց բաժնեթղթին որ և է ժամանակի մէջ որ և է դումար մը շահած լինելն կամ ո՛չ, ստուգապէս իմանալ՝ անոր թիւն հաղորդելով «Ծաղիկ»ի հաստատած «Ցանձնակատարութեան գրասենեակ»ին ի Կ. Պոլիս, Թաշ խան, թիւ 50։ Կը բաւէ որ կատարուելիք խուզարկութեանց համար իւրաքանչիւր ծախք նամակին մէջ ներփակուած ըլլայ 5 դրուշի նամակադրոշմ։ Խուզարկութեանց արդիւնքը կը հաղորդուի «Ծաղիկ»ի Նամակատուփին միջոցաւ։ Անոնք որ առանձին նամակաւ կ'ուզեն պատասխան ընդունիլ, պարտին 40 փարա աւելի դրկել։

«Ցանձնակատարութեան գրասենեակ»ը պատրաստ է նաև ստանձնել դնումն և առաքումն Արեւելեան երկաթուղեաց բաժնեթղթերու, ինչպէս նաև այն 7 ½ դրչնոց Բաղդատումներու, որք երկու ամիսը մի անգամ ի վաճառ կը հանուին եւ միայն մէկ վիճակահանութեան կը մասնակցին։

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ճիլեանի և Անարէա դրամատունը կը ծանուցանէ թէ, Արեւելեան երկաթուղեաց 1.362,476։ 1.362.479 եւ 1.362.480 թիւ բաղդատումներն 130րդ վիճակահանութենէն 400 ական ֆրանք շահած լինելով, այդ տոմսակաց տէրերը կը հրաւիրուին ներկայանալ դրամատունս և ստանալ իրենց շահած պարգեւները։

Մեռեալ Կինը

«Ծաղիկ»ի Ա. տարւոյ 46րդ թիւէն սկսած եմք հրատարակել Օգթաւ Ֆէյիլէի «Մեռեալ կինը» բարոյալից և խմաստալից վէպին թարգմանութիւնը, որուն ընթերցումը մասնաւորապէս կը յանձնարարեմք մեր ընթերցողաց։ Որպէս զի «ԾԱՂԻԿ»ի ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՔ կարենան սկիզբէն կարդալ այս ընտիր վէպը, Ջ՚ի պիտի ստանան արդէն հրատարակուած մասերն, զոր՚ս այս նպատակաւ առանձինն եւս տպագրեցինք «Ծաղիկ»ի միամսեայ դադարի միջոցին։

ՄԱՄԼՈՑ ՆԵՐՔԵՒ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳԵՐՁ

ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ ՏԱԽՏԱԿՕՔ

Ի ՊԷՏՍ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

Ա.ՇԼԱՍ.ՏԱ.ՍԻՐԵԱ.Ց

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՆԵԱՆ

ՊԱՂՏԱՏԼԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Գին 3 դրուշ

ՕՇԻՆ ԵՍԱՑԵԱՆ

Փաստաբան

Բնիկ Անգրիանուպոլսեցի փաստաբան Եսայեան Օշին էֆէնտի այս անգամ Պոլիս եկած և ի Ղալաթիա Գավաֆեան խանը հաստատուած լինելով, կը յայտարարէ թէ այսուհետեւ հոն պէտք է դիմեն իւր հետ գործ ունեցող յաճախորդք։

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՌ ՆՈՐԱՊՍԱԿ ԱՄՈՒՍԻՆՍ, գործ Տիմոթեայ Դիգքոմ Ամերիկայեցոյ։ Թարգմանեալ և Տպագրեալ արդեամբք Տպագրական Մխիթեան Հայ երիտասարդաց։ Գին 5 դրշ։ սակեզօն՝ 7 դրշ։

Բաժանորդագին ԿԱՆԽԻԿ Թուրքիոյ համար տարեկան 50 ղրշ., Ռուսիոյ համար 5 բուբլի, ուրիշ երկիրներու համար 12 ֆր։
Վճռամեայ եւ եռամեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին։
Գաւառներէն Օսմանեան Նամակատոմար կ'ընդունուի՝ 1 ղրշ.նոցը 34 փարայի հաշուով, կամ 100 ղրուշի փոխարէն 115 ղրշ։
ԾԱՂԻԿի վերաբերեալ ամէն գործի համար դիմել
Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՀՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԳԱՃԵԱՆ
Պոլիս, Պահչէ-Գապու, Թաշ խան, թիւ 50

ԾԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

درعليه‌ده بغچه قپوسنده طاش خانده ٥٠ نومروده « زاغيك » غزته‌سى مديرى پالاقاشيان حوونان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա — Ազգային, Քաղաքական եւ Գրական — 40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 1 — ՇԱԲԱԹ — 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1891

"ԾԱՂԻԿ,, Ի Բ. ՏԱՐԻՆ

Ներկայ թուով կ'սկսիմք «Ծաղիկ»ի երկրորդ տարին։

Անցեալ ամի սեպտեմբեր 15ին էր, «Ծաղիկ» ծնունդ առաւ, եւ հետզհետէ անցաւ բաղում անձնական տագնապներէ եւ դժնդակ միջադէպերէ, որք եւս քան զեւս դժուարացուցին մեր ձեռնարկն։ «Ծաղիկ»ի Տնօրէնը եւ իրեն հետ շատ մերձ յարաբերութիւն ունեցողները միայն դիտեն թէ ինչ բաղմապիսի խոչնդոտներու կուրծք տալով, կրցանք շարունակել մեր սկսած գործն եւ յաջողեցանք տարին բոլորել։ Ձեռնարկելով «Ծաղիկ»ի հրատարակութեան, գիտէինք կանխաւ որ ունինք մաքառիլ շատ դժուարութեանց դէմ, կարենալ անխոտոր ընթանալու համար մեր դծած ուղւոյն մէջ. բոլոր այդ դժուարութեանց դէմ մաքառեցանք ամբողջ տարին եւ կրնամք ըսել յաջողապէս, որչափ կրցանք. չկանխատեսուած դժուարութիւնք էին որ ամենէն աւելի նեղեցին, ամենէն աւելի յոգնեցուցին զմեզ, եւ ամենէն աւելի մեզ վնասեցին։ Այդ դըժուարութիւններէն մի քանին դեռ այժմ իսկ չեն բարձուած, եւ մեք պարտաւորուած եմք ժամանակ մ'եւս այսպէս շարունակելու, յուսալով սակայն որ շնորհիւ արդարակորով եւ լուսամիտ Կայսեր մերոյ Օգոստափառ Սուլթան Ապդուլ-Համիտ Խանի, մօտաւորագոյն ապագայի մը մէջ պիտի կարգադրուի ամէն ինչ եւ պիտի կրնամք յայնժամ՝ աղօթելով միշտ Նորին Կայս. Վեհափառութեան թանկագին կենաց համար, առաւել լիակատար կերպիւ գործադրել մեր կանխաւ դծած ծրագիրն, որ է յառաջդիմութիւնն, զարգացումն ու բարգաւաճումն Օսմանեան Տէրութեան եւ անոր մէջ բնակող ցեղերուն, որոց մէջ մեզ համար գլխաւոր տեղը կը բռնեն բնականաբար Հայ եւ Թուրք տարրերն։

Մեր սկսած գործն հետզհետէ կատարելագործելու համար, մեր կողմէն որ եւ է չանք չպիտի խնայեմք։ Ահա՛ կ'սկսիմք «Ծաղիկ»ի Բ. տարին, իբր մէկ ու կէս պարունակութեամբը՝ բաղդատմամբ Ա. տարւոյն։ Նիւթերը՝ ներկայ տարւոյ մէջ՝ պիտի լինին առաւել ընտիր եւ առաւել ճոխ, եւ պիտի ծառայեն կրթելու ընթերցողաց միտքն եւ ազնըւացնելու զգացումներն։ Ինչպէս պառաջին տարւոյ վերջին թուով յայտնեցինք, մեր յարգելի ընթերցողաց՝ եւրոպական գեղեցիկ պատկերներ պարունակող յաւելուածական թերթ մը եւս տալու համար, սկսած եմք տեսնել հարկ եղած պատրաստութիւններն. կը յուսամք որ շատ շուտ ժամանակի մէջ կարենամք այս ձեռնարկն եւս յաջողեցնել, որով ծառայած պիտի լինիմք մեր ընթերցողաց գեղարուեստական ճաշակին զարգացմանն եւս, ինչ որ մեր նպատակներէն մին է, եւ ճիշդ այս նպատակի մասամբ իրագործմանն համար է որ սկիզբէն ի վեր հոգատար եղած եմք «Ծաղիկ»ի թուղթին գեղեցկութեան ու տոկունութեան, ինչպէս եւ տպագրութեան մաքրութեան։ «Ծաղիկ»ի այս երկրորդ տարին կ'սկսի տպագրուիլ յատկապէս ձուլուած բոլորովին նոր տառերով եւ ըստ առաջնոյն գաղղիական ընտիր թուղթի վրայ։

Գալով «Ծաղիկ»ի ունենալիք ընդհանուր ուղղութեան, այդ մասին այժմ ոչինչ կարող եմք ըսել։ Մեր ընթերցողք, որ հետեւած են լրագրոյս առաջին տարւոյ շրջանին, անշուշտ կրցած են քիչ շատ դաղափար կազմել ուղղութեանը մասին, որ՝ մեր կարծեօք՝ Հայ լրագրութեան հետեւելիք օգտակարագոյն ուղղութիւնն է, ուրկէ «Ծաղիկ» չպիտի շեղի բնաւ, եւ պիտի աշխատի այդ ուղղութեան մէջ առաւել եւս յառաջանալ հետզհետէ, որչափ պարագայները ներեն իրեն։ Իսկ մասնաւոր պարագայի մը գալով, այն է մեր նոր սերնդեան բարոյականի խնդիրը, զոր այժմ ապականելու ձեռնարկած է մեր օրթոթերթերէն մին, եւ մէկ երկու յօդուածոց մէջ ողորմելի փաստաբանութեամբ մը պաշտպանել խոկ ճգնած է իւր այդ դատապարտելի ընթացք, «Ծաղիկ» պարտք կը համարի յայտարարել թէ, ինչպէս ցարդ, այսուհետեւ եւս իւր դռները փակուած պիտի մնան այդպիսի լկտի, անբարոյական ու թերթեւաբարոյ գրութեանց դէմ. մեզ այդ կարգի յօդուածներ ղրկողները պարապ աշխատութիւն յանձն կ'առնուն, ինչպէս ըրին անցեալ շրջանի մէջ մի քանի յօդուածագիրք։

Պարտք կը համարիմք յայտարարել նաեւ որ «Ծաղիկ»ի մէջ սիրով կը հիւրընկալուին ամէն լուրջ ուսումնասիրութիւնք, ամէն կարեւոր ու հրահանդիչ յօդուածք, պայմանաւ սակայն որ յօդուածագիրք պէտք է ճանչնան եւ ընդունին թէ խմբագրութեան բնական եւ արդար իրաւունքն է, թերթին ընդհանուր ուղղութիւնը եւ լեզուին մաքրութիւնը ու միօրինակութիւնը պահպանելու համար, իւր հարկ տեսած սրբագրութիւններն ու փոփոխութիւններն ընել հրատարակելի որ եւ է գրութեան մէջ։ Անոնք որ չեն ուզեր ճանչնալ Խմբագրութեան այս իրաւունքը, անոնք որ սովորութիւն ունին նեղանալու իրենց գրութեանց մէջ մտցուած լեզուական կամ գաղափարական փոփոխութեանց համար, այդպիսիք կրնան հեռու մնալ «Ծաղիկ»էն եւ դիմել այնպիսի լրագիրներու որոնք անպատասխանատու երեսներ ունենալով, կրնան ամէն գրութիւն առանց ընտրողութեան հրատարակել անխտիր։

Վերջացնելով մեր խօսքը, կը խընդրեմք «Ծաղիկ»ի բարեկամներէն որ աշխատին տարածել թերթս ամէն խաւերու մէջ եւ հայթայթել նորանոր բաժանորդներ։ Ընթերցողաց համակրութիւնը եւ բաժանորդաց թուոյն ստուարութիւնն է որ պիտի ամեցնեն, ուռճացնեն «Ծաղիկ»ը եւ պիտի ընեն զայն անթառամ ծաղիկ։

ՏԵՍՆԵՆՔ ԻՆՉ Կ'ԸՍԷ

«Վրան բաց սիրահարական գրուածոց» պաշտպան օրաթերթին անցեալ օր իւր առաջին էջին մէջ կը պարունակէր առաջնորդող (բայց ոչ էր) յօդուած մը, ըսել կ'ուզեմք խմբագրական մը։

Անբարոյական գրականութիւն. — Սոյն խորագրի ներքև և երեք սիւնակի մօտ գրութեամբ մը խմբագրապետը կը պաշտպանէ իւր աշխատակիցներէն զումանս, (ինչպէս աքաղաղն հաւերը կը պաշտպանէ իւր թեւոցը տակ), որք իրը էն մեծ մարդասէրներ, ընկերական ցաւերու վշտաճար, այդ ցաւերու պատճառները կ'ուզեն երեր բացատրել։ Խմբագիրը «ցաւ» ըսելով կ'ուզէ հասկցնել իւր աշխատակցաց ոմանց ստ անդ շահատակութիւնները, որոնք յաճախ անյաջող ելք մը ունենալով, մեծապէս վշտակրած են և որոյ ապաւորութեան ներքև գրիչը ձեռք առնելով, սրտերն ի Մօտա, կոմսուհիոյն Ննջասենեկին պատուհանէն կամ գերասանուհիոյն շրթներէն կախուած, ընկերական (իրենց այսինքն) ցաւերու վշտահար, կը նկարագրեն զամէն ինչ ամենանուրբ երանգներով, երակներովը, ջղերովը, մկանունքներովը, խարտեաշ կամ թուխ կամ վարդ կամ սպիտակ գոյներովն, մարմնոյ թափանցկութեամբը, ալն, ալն, որք յաւէտ երախտապարտ կը թողուն նկարչութեան ուսանողները։ Ժողովուրդին վատ օրինակներ են թէպէտ, ապականիչ ընդհանուրին բարոյականութեան, սակայն խմբագրապետը թշուառներուն (անոնց) վրայ գթութիւն ու կարեկցութիւն կը հրաւիրէ։ Տարակոյս չկայ թէ կը գթանք, կը կարեցինք այդպիսիներու վրայ, երբ չփոթած են և չգիտեն թէ ի՛նչ կ'ընեն, մանաւանդ այն երանելիներուն վրայ, որոց մէջ կը համարձակիմք հրաւիրել Պ. Խմբագրապետը. ասոնք՝ արդարանալու համար վրան բաց գրութեանց առջեւ՝ բոլոր ժողովուրդը տիմար կը կոչեն, վասն զի բոլոր ընթերցող ժողովուրդն է աղմուկ յարուցանողը, դժգոհութիւն ցոյց տուողը այդ գրութեանց դէմ։

Համոզում վանառել, անարդար ըլլալ շահու համար, կարծեմ թէ աւելի անբարոյականութիւն է քան լպիրշ գրութիւններ հրատարակելը։— Ըսել կ'ուզէ թէ երկուքն ալ անբարոյականութիւններ են, բայց առաջինը աւելի ծանր, աւելի վատ ըլլալուն, ինքն երկրորդը կ'ընտրէ։ Ա՛լ ազոր ըսելիք չկայ, մեզ կը մնայ լռել։

Ի՜նչ հարկ դարձեալ, մէկուն գէշ կողմերը ցոյց տալու համար՝ զայնս մի առ մի պարզել ընթերցողին առջեւ։

Ամէն տան մէջ ամէն օր կը խօսուի գայթակղական դէպքերու վրայ, ևայլն, ևայլն։ Ամէն տուն ըսելով Պ. Խմբագրապետը արդեօք միայն իւր յաճախած տնե՞րը կը հասկնայ. յայնժամ ըսելիք չունիմք, զի իւր ձեռքն է ընելիք ընտրութիւնը...։

Հայհոյութիւն, ապտեղի ածականներն Պօլսոյ Հայոց մեծ մասին խօսակցութեան աղն է։— Ներեցէք, Պարոն, մեր մէջ ձկնորսները մեծամասնութիւն չեն կազմեր...։

Ի՞նչ անտեղի բացագանչութիւն. Այսչա՛փ խարխուլ է մեր բարոյականի հիմն։ Վստահելով ժողովրդի մը խարխուլ հիմն չունեցող բարոյականութեան, պէ՞տք ենք ուրեմն շարժել այդ հիմը տեղէն, թէ ո՛չ առաւել ամրացնել...։ Եթէ բոլոր աստուածներն ինձ օգնութեան իսկ կոչեմ, չեն կարող այսպիսի հակասական, կցկտուր, անճահ եւ բոլորովին առանց խմաստասիրութեան գրուած խմբագրական մը մեկնել այլ կերպ, եթէ իմ հասկցածս կը տարբերի ձերինէն։

Լրագրութիւնը դպրոց մը կ'ըմբռնեմք՝ կրթելու համար ժողովուրդը և ո՛չ ապականելու համար զայն. խմբագիր մը պէտք է շատ լաւ իմանէ զայս։ Զուզելով այս խնդրոյ մասին աւելի ծանրանալ այս անգամ, այսչափը բաւ համարելնիդ կը խնդրէ

ԾԻՐ ԿԱԹԻՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Նախորդ առաջին յօդուածով (հրատարակեալ Շաբաթաթերթիդ Ս. տարւոյ 45րդ թուոյն մէջ), խոստացայ Ձեզ առանձինն գրել հանդերձ կարեւոր տեղեկութեամբք ժամանակագրական Պատմութիւն Ս. Երուսաղեմի անուամբ աշխատասիրած գրքոյս վերայ։ Որչափ որ չկարացի ձեռք անցնել սոյն վերնագրով նորատիպ մատեանը՝ հրատարակեալ յանուն Աստուր եպիսկոպոսի, այսու ամենայնիւ մի քանի բարեկամք, որք արդէն ծանօթութիւն ունէին իմ յօրինածս և մէջի պարունակութեան, պատմեցին ինձ տպուածին մէջ Ֆրանսերէն նամակ մի գտնուիլը, զոր իսկոյն կուահեցի Ֆլէօրեայ կարդինալի (1) նամակը լինելը գրեալ ի պատասխանի թղթոյ Գրիգոր Պատրիարքի Շըղթայակրի։ Հետաքրքրական է սոյն նամակս գիւտն, որով այսօր յիշեալ եպիսկոպոսը կը փառաւորի՝ առաջին կարգի պատմագիր համարելով զինքը, և անով փայլ մի տուած լինիլ իւր անքիրան աշխատութեան։

Աւասիկ ի՛նչպէս գտած եմ նամակը։

Երկրորդ անգամ ելնելուս յԵրուսաղէմ (1863), գլխաւոր նպատակս էր ի կատար հասուցանել պատմութիւնս զոր չէի դեռ աւարտած, և կը փափաքէի նորանոր տեղեկութիւններ եւ պատմական նիւթեր հաւաքելով ճոխացընել։ Եսայի վարդապետ, որ արդէն գիտէր իմ դիտաւորութիւնս, յայտնեց ինձ թէ՝ մի քանի կողմներ կան այս նիշ խցեկին մէջ լի թղթերով զոր Պատրիարքարանի դարաններուն մէջէն ժողված են, և սահմանեալ են վանուց փըրան մէջ այրելու, որպէս թէ փուռը տաքցնելու համար փայտ չգտնուէր։ Զայս որ լսեցի, բոպէ մի չկորուսելով անմիջապէս հասայ ցոյց տուած խցեակն, բայց ափսոս որ մեծ մասամբ հրոյ ճարակ եղած էին. վերջին մնացած կողմերն ձեռք անցուցի, և ծղի ի վեր պարզելով սկսայ պրպտել զանոնք և անյապաղաբար և սրտի յուզմամբ կարդալ. անպէտներն մէկդի թողուլ, և կարեւորներն ընտրել առնուլ։ Ասոնց մէջ էին Ֆլէօրեայ նշանաւոր նամակն. իսկ միւսներն էին պատճէնք թղթոց շղթայակրի առ Լուի ԺԵ. երկրորդն՝ ի Հռոմ առ ժողովն Փրոբականտայի. երրորդն՝ ի Կ. Պոլիս առ դեսպանն Գաղղիոյ. չորրորդն՝ յունարէն բնագիր դաշնագրի հաստատեալ ի մէջ յոյն Պատրիարքին Երուսաղէմի և Շղթայակրի, վեցերորդն՝ դարձեալ թուղթ սիրոյ և համաձայնութեան խոսքերէն լեցուաւ գրուած ի մասին խնդրոց յուզեալ յայնժամ ի մէջ Հայոց և Լատին միաբանութեան, և ստորագրեալ կնքօք դեսպանին Գաղղիոյ և երկուց Պատրիարքաց Գր. Շղթայակրի և Յովհաննու Կոլոտի։ Բայց ի սոնցմէ, կային և այլ կարեւոր գրութիւնք Յովակիմ Պատրիարքի ժամանակ ծագած վէճերու՝ ի մասին գերեզմանատան՝ Սիոնի Լատինաց և Հայոց մէջ, ևլն։

Բոլոր այս գրութիւններն և թղթոց պարունակութիւնը և ուրիշ անհամար տեղեկութիւնները կրնայ տեսնել ցանկացողն իմ պատմութեանս գրքին մէջ, որ կը գտնուի դեռ անշուշտ Աստուր եպիսկոպոսի քով և նորա քթին տակ, որ առ երկիւղի, ինչպէս բնական է, թերեւս և ոչ իսկ իմ գրքիս յիշատակութիւնը կը համարձակի բնել իւր աղբիւր իւր պատմութեան, կարծելով թէ այնու զիս փառաւորած կը լինի և ինքը կը մնայ փառաղուրկ, և լոկ օրինակիչ։ Բայց այսու ուրիշ բան չբրաւ, այլ միայն օտարի պարտիզէ գողցած ծաղիկներով իւր ճակատը պսակեց, որոյ

(1) Այն է Hercule de Fleurie, կարդինալ և առաջին պաշտօնեայ Լուի ԺԵ։

վան յամենայն զօրութենէ կը բողոքեմ առաջի ընդհանուր ազգիս թէ՛ ի ներկայումս և թէ՛ ապագայ սերնդոցս՝ Աստուր Եպիսկոպոսի գրագողութեան դէմ. կը բողոքեմ Միաբանութեան դէմ, որ մատնեց նորա ձեռքն իմ դառն քըրտանցս պտուղը, փոխանակ զնոյն տըպելու, ինչպէս որ նոյն նպատակաւ ղրկած էի, փոխարէն ընդունելով չընչին վարձ մի՝ քսան տարուան աշխատութեան։

Գուցէ Միաբանութիւնը կարծէ թէ՝ որ և իցէ վարձ հատուցանելով, բացարձակ տէրն եղած է ձեռագիր մատենին, հետեւապէս ուզէ կը տպէ, ուզէ բարձի թողի կ'ընէ և չգոյութեան կը դատապարտէ. և կամ լաւ ևս՝ նորա հոգին և ծուծը քաղելով ուրիշ անկենդան և մեռեալ աշխատութեան մի փոխանցելով կ'ոգևորէ։ Բայց այդու կը սխալի Միաբանութիւնը։ Որ և է հեղինակ, ինչպէս Եւրոպայի մէջ, իւր գրական աշխատութիւնը կը ծախէ տպարանատիրոջ, և նա պարտաւոր է տալ զայն յանուն հեղինակին. ինչպէս ասկէ յառաջ ըրաւ նոյն ինքն Միաբանութիւնը՝ Դիտուքիւն զԱստուծոյ կոչուած ձեռագիրս տալով համեստ վարձատրութենէ մի յետոյ։ Ապա ուրեմն չէ կարող ձեռագիր մի գնողն ըստ իւր հաճութեան քաղուած ընել և համառօտելով տալ իւր անուան ներքև, առանց խիստ դատաստանի ենթարկուելոյ։

Միաբանութիւնը զինքը դատաստանէ ազատելու համար երկու առարկութիւն ունի ընելիք իմ պատմագրութեանս մասին. առաջին՝ թէ շատ ընդարձակ է, երկրորդ թէ գրաբար է։ Ընդարձակութեան մասին պիտի ըսէ թէ տպագրութեան համար բաւական դումարի կը կարօտի և գրաբարին համար թէ՝ այժմ գործածութենէ դադրած է։

Կը պատասխանեմ, բաղդատութեան համար մէջ բերելով Համաբարբառ Ս. գրոց կոչուած գիրքը, զոր Ս. Աթոռը մամլոյ յանձնած է, և առաջին տեսարը տեսնելու բարեբաղդութիւնն ունեցանք մեանք։ Հասարակաց խոհեմ դատողութեան և գնահատութեան կը յանձնեմ կշռել զերկուսն ևս, ի մասին կարևորութեան ընդհանուր առմամբ։ Համաբարբառ կոչուած գիրքը ընդարձակութեան կողմէ մեծ տարբերութիւն չունի, և տպագրութեան ծախքը քառապատիկ աւելի պիտի արժէ, կարծեօք ութ հարիւր լիրա։ Գալով օգտակարութեան մասին, կարծեմ մի քանի քարոզիչներէ և կրօնական աշխատասիրութեանց հետևող գրագէտներէ և ընդհանուր պատուելիներէ զատ ուրիշ և ոչ մէկուն օգտակար կրնայ լինել։ Ըստացողն՝ իբր զարդ և իբր բեռն աւելորդ՝ պիտի ճոխացնէ անով իւր գրադարանը, առանց անգամ մի ձեռքն առնելոյ։

Գալով գրաբարին, համամիտ չեմ բնաւ խումբ մի արդի գրագէտներու որք խսպառ հալածել կը ջանան գրաբարը մեր լեզուէն, որոյ միայն պարծանքն համարուած է Եւրոպայի հայերէնագիտաց քով, որք գրաբար լեզուին վրայ կը մշակեն մեր տոհմային պատմութիւնը։ Թողունք սոյն խնդիրը. բաղդատենք միայն սոյն լեզուի տեսութեամբ մեր Պատմութիւնն Համաբարբառի հետ. ո՞չ ապաքէն այն ալ գրաբար է։ Եթէ ներելի է, կը համարձակիմ ըսել թէ իմ Պատմութեանս ոճը խիստ պարզ է, բայց ոչ ցամաք բոլորովին և իբր նմոյշ դիտաւորութիւն ունիմ շաբաթաթերթիս հետագայ թիւերու մէջ հրատարակութեան յանձնել վերջին երեք գլուխները։

Չեմ ուզեր այս տեղ բարեպատեհ առիթը կորսնցնել գրագիտական տեսութեան մի մասին ի հրապարակ հանելու իմ մէկ զոհողութիւնս, զոր ըրած եմ ի պատիւ անուան միաբանական Ուխտին Ս. Յակոբայ, առանց նախանձախնդիր լինելոյ և փառս կորզելոյ յանձին։

15 տարի մնալով Ս. Յակոբայ վանուց մէջ թէ՛ դասատուութեան և թէ՛ տպարանի տեսչութեան պաշտօնիս, այսչափ տարւոյ միջոցին մէջ հրատարակած եմ 45 էն աւելի գրքեր։ Ասոնց մէջ կան որ, բաց ի տպագրական սըրբագրութենէ, լուսաբանած ևս եմ առանձին յօդուածներով և բացատրած, ինչպէս են Լեբուբնայ Եդեսացի, Մատթէոս Ուռհայեցի և Միխայէլ Ասորի։ Կան որ գրեթէ բոլորովին ի նորոյ յօրինած եմ և ճոխացուցած, ինչպէս է Յովսէփ գեղեցիկն, և Երկամեայ պանդխտութիւն ի Հապէշսան կոչուած գիրքը, եւ նորա գաղղիերէն թարգմանութիւնն ձօնեալ առ Վեհ. Թագուհին Անգղիոյ։ Իսկ Ուղեցոյց Ս. Երկրի կոչուածը բոլորովին իմ հեղինակութիւնս է 25 աւուր մէջ լրացուցած, զոր հանգուցեալ Եսայի Պատրիարքը կ'ուզեր հրատարակել յանուն աշակերտաց Ժառանգաւորաց դպրոցին։

Ծանր է ինձ արդարև ճանձրացնել խոհուն ընթերցողներն ի մէջ բերելով մի առ մի այն աշխատութիւններ զորս գրեթէ քսան տարիէն ի վեր է կատարած եմ ի պատիւ և ի հռչակ անուան Միաբանութեան. բայց չեմ այլ ուզեր զանց ընել յիշատակելու Սիօն ամսաթերթի խմբագրութիւնը զոր առանձինն յանձն առի հրատարակել երկուս ու կէս տարի, առաջին թիւէն սկսելով, երբ Միաբանութեան դիւրակեաց անդամներէն և ոչ մին համարձակեցաւ աջակցիլ ինձ, թէև դիւրակեցութեան պատիւն ինքը ժառանգեց։

Սոյն խոստովանութիւնս՝ հակառակ իմ անփառասէր բարուց՝ ստիպեց զիս ի հրապարակ հանել Աստուր Եպիսկոպոս, որոյ գրագիտական կարողութեան և հանճարոյն արժէքը կրնայ ճանչցուիլ «Պատմութիւն Թաթարաց» գիրքը կարդալով, որոյ ինքն է հեղինակն և լաւ ևս թարգմանիչը։

Իզմիր Տ. Հ. Թ. ՍԱՒԱԼԱՆԵԱՆՑ

ԿՐՕՆԱԿԱՆ

—

«Դիւրին է մալխան մտանել ընդ ծակ ասղան, քան հարուստին մտանել յարքայութիւն Աստուծոյ։»

«Ծաղիկ» ի վերջին 52ՐԴ թուոյն մէջ առաջարկուած է մեկնել հարուստ երիտասարդի մը Յիսուսի հետ ունեցած խօսակցութիւնը։ Մեկնութիւն մը կըրնայ լինիլ բազում տեսակէտներով։ Պիտի փորձեմք յիշուած խօսակցութիւնը մեկնել մեզ օգտաւէտ թուած տեսակէտով մը։

Այդ խօսակցութեան գլխաւոր պարագայներն, որ զարդիս տարօրինակ կը թուին, են՝ 1.— Կատարելութեան հասնելու համար հարստութենէ հրաժարելու հարկը, 2.— «Դիւրին է մալխան մտանել ընդ ծակ ասղան, քան հարուստին մտանել յարքայութիւն Աստուծոյ» լինելը։ Երբ քաջ համոզուիմք թէ, 1. հարստութիւնը դժնդակ փորձութիւն մ'է ամէն կերպ ճշմարիտ յառաջդիմութեան հանդէպ,— 2. մարդկային բնութիւնը կարի յեղյեղուկ ձգտումներ մ'ունի դէպ յ'զգայական հեշտութիւն, 3. հարստութիւնը հզօր միջոց մ'է զարդիս՝ ունել ստանալ զամենայն, 4. Ս. Գիրքը կը գործածէ այնպիսի ոճ մը իւր լեզուին մէջ, որով իւր բառերու մըթերքը կը զօրէ հաղորդակցել և բիւրապատկել, այլայլելով որ և է բառի մը իմաստը իւր մէն մի նախադասութեանցը մէջ,— երբ այս վարկածներու ճշմարտութեանցը հասու լինինք, յայնժամ դիւրաւ կը պարզուի Յիսուսի հայեացքը ինչպիսի ստուգութիւններու վրայ հիմնուած լինելն, և խիստ բանաւոր կը թուի Յիսուսի այդ արտայայտութիւններն։

Կարելի չէ տարակոյսի ներքև ձգել հարստութեան՝ մի դժնդակ փորձութիւն լինելն ընդդէմ մարդկային յա-

ուաջդիմութեան, երբ դիւրութիւն կայ նովաւ աշխարհի տիրել, և երբ մարդ դեռ եւս չէ հասած այն կատարելութեան, որ բանաւոր խորհրդով զօրէ թումբ քաշել իւր ձգտմանց հանդէպ՝ դէպ ի մլուսն յղդայական մոլութիւն։ Արդ, բնական է որ Յիսուս նախ քան զամենայն կ'առաջարկէ հարուստ հետամուտին հրաժարիլ իւր այն խափանարկու չարիքէն որ յանձին հարստութեան կ'անձնաւորի, և այս առաջարկութիւն կարի ուղղափառ է մեր բանաւոր կազմակերպութեանց օգտակարագոյնն լինելու հայեացքով։ Երկրորդ պարագային գալով, արդարեւ զառջինն, լեզուի մասին Ս. Գրոց ի գործ ածած ոճին վրայ գաղափար մը չունեցած, խիստ զարմանալի կը թուի որ երկնից արքայութիւնը կը փակուի մեծատանց դէմ, մինչ շատ տեղեր ինք իսկ կը գովէ այնպիսի մեծատանց արդարութիւնը, որք մեզ օրինակ լինելու տիպար յանձնարարուած են. կը հակասէ՞ արդեօք Սուրբ Գիրքը։ Աստուածաշունչը՝ մեզմէ ծածկեալ շատ ճշմարտութիւններ ունի, մի միայն անոր համար որ նորա լեզուաբանական ոճն նկատողութեան չեմք առած. և շատեր կը փորձուին ենթադրել՝ դէթ ի յարգանս այս հոյակապ մատենոյն լռելեան՝ թէ Ս. Գիրքը լի է հակընդդէմ ասութեամբք և մին զմիւսն ժխտող վարկածներով. այլ թէ յայնժամ իսկ կարի ներդաշնակ կապակցութեան մը կը յանգին նորա ամէն մանրամասնութիւններն անդամ, երբ լեզուին այս ոճին, այսինքն բառից՝ նախադասութեանց՝ ասութեանց՝ խմաստներն այլայլելու սովորութեանը հասու լինիմք։(1)

Մեծատուն կամ հարուստ բառը Ս. Գիրքը մերթ կը գործածէ իբր ունեւորի ածական, մերթ իբր ունեցածը պաշտողի։ Աստ մեծատունը չնշանակեր այլ ինչ բայց եթէ արծաթասէր։ Զերծ է այն միլիոնատէրը Յիսուսի այս վճիռէն, որ իւր ինչքը ուղղափառ բանաւորութեամբ մը ունի վարել, ընդ միշտ ստորադասելով զայնս իւր նուիրական, իւր պաշտելի սկզբանը, և ըստ հարկին անվրդով զոհելով զայնս ի սէր միայն տիեզերական ճշմարտին։ Դատապարտելի հարուստ մ'է այսու վճռով այն կարի տնանկ մէկը որ իւր գրպանի երկու լուման իսկ չը զօրեր մերժել յանուն ճշմարտին, և զայնս միայն ըրած է բազին իւրում պաշտամանն։ «Մտանել յարքայութիւն երկնից» ըսելով պարտէ իմանալ հպատակութիւն մը մի այնպիսի վարդապետութեան որ կը դաւանի թէ կենաց ճշմարիտ մեծութիւնը, իմաստութիւնը և հզօրութիւնը դրապէս տեղի կ'ունենան մի միայն արքութեան, անմեղութեան և արդարութեան տնտեսագիտական միջոցներով։ Յիսուս մարդկային ազգին համար այս բարեմասնութեանց հզօրագոյն տիպար մ'էր, որուն մեծութեան, իմաստութեան և արդարութեան՝ Ս. Գրոց ամէն հակառակորդներն իսկ կը հիանան և զորս չէ ստացած այլով իւիք, բայց եթէ ամրծութեամբ և սրբութեամբ, որ գլխաւոր միջոցներ են կատարելութեան։ Կենաց մի այսպիսի կացութեան հանդէպ չկայ այլ ինն անողոք թշնամի, ստորագնելու զմարդ ի խոնարհ, բայց եթէ զգայական հեշտութեանց մոլութիւնը, առ որ հարստութիւնը ճանապարհ կը հանդիսանայ անարդել մտիցն ի մարդ, և որուն համար կ'առաջարկուի կատարելութեան հետամտին՝ խզել այդ հաղորդութիւն իսպառ, որ դիւաց բանակներ ունի մուծանել յինքեան։ Ա. Բ. (1)

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

—

ԱՄՄՈՆԻ ՔՐՄԱՊԵՏՆԵՐԷՆ ՄԻՈՅՆ ՄՈՄԻԱՆ

Թերէի մէջ Ամմոնի քրմապետաց մոմիաներ գտնուած են ի նորոյ։

Տարւոյ մը չափ՝ օրերուս մեծագոյն մասն՝ Ազգային Մատենադարանին տեսակ մը ներքնայարկին մէջ անցուցի, ուր եգիպտական դագաղներ զետեղած էին։ Ինձ յանձնուած էր զանոնք ցուցակագրել և անոնց արձանագրութիւններն օրինակել։ Անոնցմէ ոմանք դեռ կը պարունակէին իրենց մոմիաներն։ Սրահն անջատուած էր կենդանի արարածոց աշխարհէն, և ի վերուստ միայն լոյս կ'առնուր։ Առանց չափազանց ճիգ թափելու կարելի էր երևակայել թէ գետնադամբան մ'էր այն։ Երբ խոշոր բանալին կը դարձնէի և կը մտնէի մեռելոց ընդարձակ սրահը, բարձրահասակ երիտասարդ մը, անշարժ հսկայ մը, ուշադրութիւնս իւր վրայ կը դարձուներ. հոն կը կանգնէր, և կարծես կը տիրապետէր այս ամէն մեռելոց վրայ։ Իւր անունը լաւ գիտէի. Պէտու-Ամէն-Ապս կը կոչուէր նա. իւր տարիքն ալ գիտէի. Տրայիանոսի տիրապետութեան ԺԹրդ տարին՝ 21 տարեկան, 4 ամսուան և 22 օրուան եղած էր. բայց շնորհիւ եգիպտական զմուսման, ժամանակը վրայէն սահած էր առանց այլափոխելու զայն։

Ահա իւր ներկայութեանն է որ յանդգնեցայ մի քանի սրբապղծութիւններ ընել, որոց գլխաւորը միայն կը յիշեմ։ Անոնց դէմքը տեսնելու և վաղեմի մեռելոց պահպանական հմայքը (amulettes) գտնելու հետաքրքրութեամբ — որոց վրայ կարծես կը հսկէր Պէտու-Ամէն-Ապս, — ուրթ օրի չափ փակուեցայ հոն՝ որպէս զի անոնց երկնները քակեմ։ Այս հանդուցելոց մին՝ իւր արձանագրութեամբք և գոյնզգոյն նկարիւք ծածկեալ երկու չքեղ դագաղաց՝ ուշադրութիւնս գրաւեց։ Իւր ժամանակին՝ Եգիպտոսի մեծագոյն անձնաւորութեանց մին էր, քրմապետ Ամմոնի՝ ի Թեբէ, դիւցական տաճարին պատկանող դպրաց դասապետ և յաւիտենականութեան տան աւագ քրմապետ։

Այս Ամմոն նախագահած էր միշտ Թեբական երրորդութեան մէջ այն ժամանակներ՝ յորս Մովսէս կը մեծնար Ռամսէս Բի արքունեաց մէջ։ Երբ Թագաւորն — Սեսոստրիսն Յունաց — կը մանէր իւր փառաւոր նաւակն, և կ'երթար ի Վերին Եգիպտոս, ի Թեբէ, որ իւր սիրական ոստանն էր, և երբ իւր դիւթական պալատն՝ ի Ռամէսսէում կը հասնէր, միատեղ տանելով իւր հեռաւորդներն և զՄովսէս, որ Թեբէս ի հեռուստ և որպէս Թէ լուսաւոր ամպի մը մէջէն նշմարած էր զքրմապետն Ամէնհոտէպ, ի միջի սուրբ հանդիսից, որոց ինքն կը նախագահէր։

Վեր առի իւր անտուկին կափարիչն և բռնելով իւր երէզներէն, որ տեսակ մը գերեզմանի խանձարուրք կը կազմէր, դժուարաւ կանգնեցուցի. ապա սկսայ մերկացնել։

Գործողութիւնն աշխատալի էր. վուշէ երիզներն թնճուք եղած կարժի մը դերձաններուն պէս իրար խառնուած էին։ Զորս հինգ ժամ աշխատութենէս յետոյ՝ Ամմոնի քրմապետն իւր ամէն ձևերովն երևան ելաւ։ Երեսուն և երեք դարուան ծածկոյթէն մերկացուցեր էի Թեբէի այնչափ մեծարեալ անձն։

Իբր երկու հարիւր մեդր՝ նուրբ վուշէ երիզներու կոյտ մը գոյացաւ, և դիզուեցաւ մեր ոտից քով, վասնզի իւր ոտքն՝ ոտից կը դպէին։ Կուպրէն սեւացած, բայց գծերն իւր ճշդութեան մէջ պահպանեալ հանդարտ դէմքն՝ գրեթէ իմ դէմքիս կը դպէր։ Բազկաց մէջ ընտանեաբար կը գրկէի Ամէնհոտէպն։

Պէտք չէ կարծել թէ ի նախկին Եգիպտոս ամէն հանգուցեալք միևնոյն խնամք կը թաղուէին։ Ինչպէս ի մեզ բազմադիմի թաղման ձևեր կան, ըստ նմին օրինակի, հոն ալ այլ և այլ դա-

(1) Այսու սկզբամբ նկատելով, արդեօք որչա՞փ քմահաճոյ մեկնութեանց, հեգնութեանց առիթ ընծայած է ի մէջ այլոց «վան վաղիւն մի՛ հոգայցէք»։

(1) Նոյն նիւթը գեղեցիկ կերպով պարզաբանած է նաև Ս. Երուսաղիմայ միաբան Գեր. Տ. Մամբրե եպիսկոպոս Մարկոսեան։ Պիտի հրատարակեմք յաջորդ թուով։

սակարգի մարդիկ՝ տարբեր եղանակօք իրենց թաղումը կը կատարէին։

Թշուառ մէկն ի՞նչպէս կրնար գործածել հրաշալի նրբութեամբ գործուած վշեայ ծրարներ, — Եգիպտոսի գեղեցիկ վուշն որ ի հնումն այնքան հռչակ գտած էր, — որով ծածկուած էր Ամմոնի քրմապետն։ Երբ աղքատին կենաց թելը խզէր, որ միայն Նեղոսի ջրէն խմած էր, ա՛յն ալ իւր ջրշեղջէն, և հապա՞ ճաշակած էր Ակէs կոչուած խմորեալ պատուական գարեջրէն, — անյապաղ կ՚առնուին զնա և ծակի մը մէջ կը թխէին՝ գետնէն քանի մը հարիւրորդամեթր խոր։ Զկային անոնց մահն ողբալու վարձեալ ո՛չ եղերերգակք և եղերամարք, և ո՛չ ալ անոնց դագաղն հանդիսաւ տանող եղներ։

Մեծատունն — և նա մանաւանդ Ամէնհոտէպի պէս բարձրատիճան պաշտօնեայ մը — ուրիշ պատուոյ ալ կ՚արժանանար։ Մումիաներուն գտնուած մեռելատանները բարձրաւանդակի մը վրայ վերեղուած էին, ուր յորդութեանց եղանակին՝ Նեղոսի ջուրերը չէին կրնար հասնիլ։ Բայց կենդանի արարածոց և հանդուցելոց քաղաքին միջև կը կանգնէր այնպիսի քաղաք մը՝ զոր արդի մարդոց միտքը չէ կարող երևակայել։ Այն դիակները զոր կը զմուսէին, հոն՝ յաւիտենականութեան օթևանն հասնելէ առաջ՝ ոմանք եօթանասուն օր, և այլք՝ նուազ ժամանակ կը բնակէին։ Թեբէի և Մեմֆիսի մերձակայ վայրերն՝ այդ մարմիններէն առ նուազն երկու երեք հարիւր հատ կը գտնուէր։ Այս երեք հարիւր մարմնոց բոլորտիքն ամբողջ ժողովուրդ մը զբաղած էր՝ գերազանց զմուսման մը բազմաթիւ փորձերուն ենթարկելու համար զայնս։

Հանդուցելոյն փորոտիքը կը հանէին՝ որպէս զի կանխահաս փտութենէ պահպանուի, և զայն հայբորակի մէջ կը թողուին։ Այս ցնորական քաղաքը կ՚ողողէին լի դիակօք աղի ջրոյ ուղիներ։

Երբ յետ բազում աւուրց աղը կը թափանցէր մարմնոյն մէջ, յայնժամ կ՚ըսկըսէին զմուսումն՝ աղօթիւք, կուպրի և անուշահոտութեանց ցօղումներով, վըշոյ պատատումներով, վերջին արդուզարդով, ամենայն ինչ որ պարտ էր պահպանել մարմին այն հեռաւոր օրուան համար՝ ուր պիտի անցնէին իւր վրայէն յարութեան շունչերն. որովհետեւ իւր բոլոր մտադրութիւնները կը ձգտէին ի մի վարդապետութիւն, յայն հաւատք՝ որ կը տիրէր Նեղոսի մէջ, այն է յարութիւն մարմնոց։ Ցաչս Եգիպտացւոյն՝ մեռելատանք ոչ այլ ինչ էին այլ տեսակ մը խոտոյ մեծ ամբարներ, որոց մէջ ամենայն զգուշութեամբ կը զետեղէին այդ թօշնեալ ծաղկունքն, այսինքն զմուսեալ մարմիններն, մումիաներն, որ հոն կը մնային՝ սպասելով զարթման և քաղցրասիք հողմոց շընչմամբ դալարացման։

Զմուսանոց տխուր քաղքին մէջ, գետնադամբան տանելէ առաջ, մեռելը կը զարդարէին նաև իւր մումիային վրայ և կամ պարզապէս դագաղին մէջ դրուած պահպանական հմայիւք, որպէս զի անդրգերեզմանեան շնորհք գտնեն իրենց կրկին մարմնոյն և իրենց հոգւոյն համար։

Գերեզմանաց մէջ իրենց առատութեամբ տարածած բանն էր նախ բոլոր, խորհրդանշան լինելութեան և կերպարանափոխութեանց, որ Նուիրական ներքնակողման մէջ հանգուցելոյն ուղած ձևերն առնելուն կ՚օգնէր, ըստ հաճոյս փոխուելով թռչնոյ, անուշահոտ անխարի (lotus) և նոյն իսկ աստուծոյ։ Այսպէս մարդն աստուածացեալ՝ այլ ևս երկրորդ մահուընէ չէր վախնար. նա լիաթոք կը շնչէր դից ներշնչած շունչն, նոյն աղբիւրներէն կը խմէր, նոյն սեղանը կը նստէր, և նոյն աշխատութիւնները կ՚ընէր։

Բզէզն յետոյ, հին Եգիպտացւոց գերեզմանաց մէջ կը գտնուին կիտուածանկար հողէ արձանիկներ, որք կը կըրեն արօր և վարուցանի պարկ։ Այդ արձանիկները կը ներկայացնեն ննջեցեալն՝ Աալուի արտերուն մէջ, այսինքն եգիպտական Եղիսէին շքեղ դաշտաց մէջ, երկրագործի կերպարանօք։ Ա՜հ, այն գեղեցիկ ցորեններն որ կը բողբոջէին անդ ցանքէն յետոյ, և աստուածացուցելոյ երանաւէտ ցօղումներն...։ Մինչդեռ Ամէնհոտէպի մումիայն կը նընջէր իւր խանձարրաց մէջ, իւր կրկինն՝ շնորհիւ Ոսիրիսի նպաստաւոր դատաստանին, անտարակոյս խորհրդաւոր երկրին արտերուն մէջ կը մշակէր ցորենն և գարին։ Այն վայրկենին իսկ ուր դիակը կը մերկացնէի իւր երէկներէն՝ յուլիսի մէջ էր. քրմապետը՝ ցորենն հնձող մանգաղը թողած էր, և պարտէր հնձող կասման պարապիլ աշխարհիս ոգիներուն հետ, օգնական ունենալով անդրերկրեայ Եդենին մեծ ցուլերն։

Բայց միայն երկրագործութիւնը չէր որ կ՚զբաղեցնէր զԱմէնհոտէպ։ Միւս կիսագնտի կեանքն ալ նմանելով Նեղոսի հովտին կենաց, հոն՝ անդրգերեզմանեան դեռոյն վրայ պտոյտներ կատարելով կը պարապէր։ Արեգակաստուծոյ նաւակին մէջ մնալով, — այս բանն երանաւէտներու գերագոյն վարձատրութիւնն էր, — իւր երիտասարդութեան ժամանակին պէս կ՚առնուր թիակն և դից հետ կը վարէր երկնային նաւարկութիւններն։

Բայց Ամէնհոտէպի բոլոր այդ յառաջահաս պատիւներն հայթայթող երջցներն՝ աներեւութացած էին իւր դագաղէն. այն դեղեցիկ պատեանն իսկ —թերևս ոսկեփայլ— որուն մէջ ամփոփած էին իւր մումիայն, ուր և այնքան ճշդութեամբ յարմարած մնած էր, հոն չէր այլ ևս։

Իմ ձեռքէս զատ ուրիշ ձեռքեր, — քրմապետն իւր երկներէն առանց մերկացնելու, — զինքն հանած էին իւր հարուստ պատեանէն, և երկրորդ դագաղին մէջ էին նետած։ Առանց բան մը ձգելու՝ անոր քով գտնուած հմայական բոլոր գոհարները վերցուցած էին։ Ո՞ր դարու մէջ այդ գողութիւնը կատարուած էր։ Իւր փորագրեալ քարերովն, իւր գոհարներովն, իւր ոսկեայ արձանիկներովն եւ իւր պարտիզաքարերովն (lapis-lazuli)՝ մեռելաքաղաքը կենդանեաց քաղաքէն աւելի հարուստ էր, որով աւելի գեղեցիկ և աւելի դիւրին աւար մը կ՚ընծայէր գողերուն։ Մեք Ամենհոտէպի դրեթէ ժամանակակից ոստիկանական վաւերագիր մը ունինք, որ կը ցուցնէ թէ նոյն իսկ Թեբէի մեռելաքաղաքին մէջ աշխատող դործաւորք՝ մեռելոց հետ միշտ այնպէս շատ փափկութեամբ չէին վարուեր։

Ամէնհոտէպի մումիան այժմ Ազգային Մատենադարանին մէջ է. զայն դրկած են — ո՛ պղծութիւն — բնական պատմութեան թանգարանն, երկդլխանի տղոց և երկար կիտածանի քրմին մօտ։ Քրմապետիս յայց ելայ իւր այդ նոր բնակարանին մէջ։ Հոն շատ տխուր էր նա, աւելի տխուր քան այն սրահին մէջ ուր իրարու հանդիպեցանք, ուր և անոր հին կացութեան և արժանեաց վրայ գաղափար մը կազմեցի։

E. Ledrain

Իւսկիւտար Կ. Տ. ՊԱՍՏԱՖԵԱՆ

ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

—

— Ուր շատ իմաստութիւն, հոն շատ վիշտ կայ։

— Հարստութիւնը աղի ջուրի կը նմանի, որչափ խմես, այնչափ կը ծարաւնաս. նոյնպէս է նաև փառքը։

— Լաւ արհեստ մը ոսկի կ՚արժէ։

— Անիրաւութիւնը համառօտ զըրպարտութիւն մ՚է։

— Երջանկութիւնը երազ մ՚է, իսկ վիշտը իրականութիւն։

— Շատ հրաշալիք կան, այլ քան զմէն մեծագոյնն է մարդն։

— Ճշմարիտ հաճոյքն ճշմարիտ պէտքերու հետ կը լինի։

ՍՈՔԱԿՆ ԱՆՏԱՌԸՆ

Առ Ո. Ե.

Առանձնակի ո՛վ իմ կենաց խանդաղանք,
Ո՞ւմ արդ բողեր կոյս անտառին այն հո բոյն,
Ուր բազէից ոչ կըրէիր հալածանք,
Ուր կ'երգէիր հոյդ եւ զիմ ցաւս ի լար նոյն։

Հէգ սոխակիկ, բոլոր յոյսերդ պատրեցան,
Կայծակն երկնից հրդեհեց վաղ հո բունիկ,
Բունիկդ զոր աչք չարկամին բնաւ չի տեսան,
Այլ զոն գացիր դու վաս բաղդին, ո՛վ բուչնիկ։

Աւա՜ղ... դեռ նա բուչի բուչտի անանպատակ,
Մոլար աչօք բոյն որոնէ ի յերկրի,
Իւր խոնջ թեւոց հանգիստ գտնել հէգ սոխակ
Նկրտելով, անյոյս աստ անդ դեգերի։

Չիք ալ բընաւ թեզ կարեկցող գրբոտ սիրտ,
Ոյր կարէիր՝ որպէս երբեմն՝ ծոցոյն մէջ
Տաքնալ, հեռի երամակէն չար եւ բիրտ
Երգել եւ քաղցր նախկին երգերդ հո անվերջ։

Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԶՈՐԱՑԵԱԼԻՔ

— Հայրիկ, ինչո՞ւ համար նաւերուն սովորաբար կնկան անուն կը դնեն։

— Որովհետեւ անոնց հանդերձանքը շատ դրամի կարօտած է։

—

Տիկինը. — Եթէ հիմա սա լճին մէջ խնամ, չէ՞ որ մէկէն ջուրը կը նետուիք գիս ազատելու համար։

Պարոնը. — Ի՜նչպէս, հիմա... այս նո՞ր զգեստներովս։

—

Ակնցի հարս մը կեսրոջը հետ բռանվայ կը մտնէ. ուր ամէն ազգէ եւ ամէն հասակի երկսեռ ներկայից ձեռքերը կը համբուրէ, մեծապէս ուրախացնելով բծախնդիր կեսուրը։

—

Երաժշտութեան ուսանող մը յօրինած իւր մէկ փոքրիկ կտորը ներկայացընելով մեծանուն վարպետին, Ռօսինիի, կը խնդրէ որ սրբագրէ և չը հաւնած տեղերը խաչով նշանակէ։ Երկու օր վերջ վարպետին քով կ'երթայ սրբագրութիւնը առնելու, և բնաւ խաչ մը իսկ չտեսնելով երգին վրայ, ուրախութեամբ կը հարցնէ.

— Ա՜հ, վարպետ, կ'երեւի թէ ամէն մասերուն ալ հաւներ էք։

— Ո՛չ, բարեկամս, կը պատասխանէ, եթէ խաչերով ամէն տեղն ալ նշանակէի, երգդ գերեզմաննոցի մը կերպարանքը պիտի առնուր։

ՓՈՔՐԻԿ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԻԲՐ ՆԱԽԱԲԱՆ

Սիրելի ընթերցող, տեսնելով ՓՈՔՐԻԿ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ վերնագիրն, ըսես գուցէ. Ահա՝ նոր բառգիրք մի ևս։ Գիտեմ թէ այս վերջին 10 տարիներու մէջ ունեցար բաւական բառագրքեր, Նոբայրէն սկսեալ մինչև Նուպարեան, և Երուսաղեմի Համաբարբառն, ու Սիմոն Գաբամաճեանի Հայերէն լեզուի Նոր Բառագիրքն։ Արդ, նոր բաժանորդագրութիւն բանալու խորհուրդէս ի սպառ հրաժարելով՝ Ծաղիկի կուտամ ի բաղմաց հետէ զանազան հոյակապ գործերէ հաւաքած բառերս, անոնց կցելով յագեցուցիչ տեղեկութիւններ։ Ուշադիր ընթերցողը պիտի տեսնէ թէ պարզ թարգմանութիւն մի չէ գործս, և ոչ սարկօրէն հեռաւորութիւն մը, այլ կը համարձակիմ ըսել թէ հեղինակութեան մը կնիքը կը կրէ։ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ բառարանի մը պէտքն յոյժ զգալի է յաղագիս, բայց սա այնպիսի մեծածախս հրատարակութիւն մ'է, որ ամենէն աւելի ձեռներիցութիւն կը պահանջէ, և զոր ձեռնհաս դրադիտաց խումբ մի կամ ուսումնական կաճառ մի կարող է միայն պատրաստել։ Այս երկու պայմաններով ևս առ այժմ անկարելի լինելով այսպիսի գործոյ մի հրատարակութիւն, կը հրաւիրեմք զընթերցողս սակաւուք գոհանալ արդ՝ Ծաղիկի մէջ հետզհետէ հրատարակելի այս հանրագիտական տեղեկութիւններէն։ Կ'սկսիմք։

ԱԿԱԴԵՄԻԱ. — Ակադեմիան հասարակաց ծառազարդ ճեմելիք մ'էր, կեփեսեայ եղերքը, Աթէնքէն վեց ասպարէզ հեռու։ Ակադեմոս անուանի դիւցազնը իւր հայրենեաց նուիրեց այս երկիրն հոն բանալու համար կրթարան։ Պղատոն՝ որ անոր մօտ կալուած ունէր, բացաւ հոն իմաստասիրական վարժարան Քրիստոսէ 388 տարի առաջ, և կոչուեցաւ Ակադեմիա, որ հռչակաւոր եղաւ շատ ժամանակ։ Այնուհետև բացուեցան և ուրիշ տեղեր Ցունաց ճեռամի ակադեմեայք, թուով հինգ։

Այժմ այս անունը արուած է զանազան ընկերութեանց և ժողովոց, որք կը պարապին դպրութեանց, գիտութեանց, արուեստից, մարզանաց, ևն։ Գաղղիոյ մէջ հինգ ակադեմեայք են, Ա. Գաղղիական ակադեմիա, Բ. Գիտութեանց ակադեմիա, Գ. Արձանագրութեանց եւ դպրութեանց ակադեմիա, Դ. Բարոյական եւ քաղաքական գիտութեանց ակադեմիա. Ե. Դեղարուեստից ակադեմիա։

Գաղղիական ակադեմեան պարզապէս կը կոչուի համալսարան, և կը պարապի միայն դպրութեանց և գաղղիերէն լեզուի զարգացման. հաստատուեցաւ 1635ին Ռիշլիէօյի ժամանակ։ Ակադեմականաց նշանն է դափնեայ պըսակ, առ անմահութիւն մակագրաւորակէ կոչուեցան քառասուն անմահք, որովհետեւ այս ակադեմականաց թիւը քառասուն է միայն՝ բովանդակ Գաղղիոյ մէջ։

Ի Գերմանիա ակադեմիա կը կոչուին այն հաստատութիւնք որք կը պարապին բարձրագոյն գիտութեանց։ Ցիտալիա կը հաշուուին իրը 550 ակադեմեայք, յորոց բաղումք նուիրեալ են գեղարուեստից։

Պերլինու Գիտութեանց և արուեստից Ակադեմեայն հաստատուեցաւ 1700ին Մեծն Ֆրէտերիկ Ա. է, որու առաջին առաջնորդ եղաւ Լայպնից։ Փեթրսպուրկի գիտական ակադեմեան Մեծն Պետրոսէ հաստատուեցաւ Լայպնիցի եղանակաւ։

ԱԿՆՈՑ. — Այս անուամբ կը կոչուին զանազան տեսարանական գործիներ՝ որք կը դարմնեն աչաց տեսութեան անկատարութիւնները, կամ կ'ընդարձակեն հեռաւոր մարմնոց պատկերը, զանոնք մօտեցնելով։ Ակնոցաց գիւտը կ'ընծայուի յոմանց Ռոժէր Պաքոնի, և յայլոց Փլորենտացի Սալվինոյի, որք էին 1280ին, իսկ յոմանց կ'ընծայուի Դոմինիկեան կրօնաւորի մը, Աղեքսանդրը Սփինատոյ, վախճանեալ Փիզա քաղաքին մէջ 1313ին։ Բայց այս ստոյգ է թէ Չինաստանի մէջ հնագոյն ժամանակներէ ի վեր ծանօթ էր ակնոցն։

ԱՂԱՒՆԻ. — Թռչուն նրբակառուց, կարճոտն, սպիտակ կամ թուխ, և կամ խայտաբղէտ փետրովք։ Միսն համեղ է։

Աղաւնին նշանակ է անմեղութեան, պարզութեան, քաղցրութեան և հաւատարմութեան։ Ասորիք կը պաշտէին զանի, և Աստղկան նուիրուած էր։ Հրէից մէջ ուրբաթ ծնունդէն յետոյ երբ կինն տասնմար կ'երթար, կ'ընծայէր գառն մի, և կամ զոյգ մի աղաւնի։ ԶՍուրբ հոգին կը ցուցնեն յաղաւնի, մկրտութեան ատեն Քրիստոսի վրայ աղաւնակերպ իջնելուն համար։

ԱՆԴԱՄԱՀԱՆՈՒԹԻՒՆ.— Անդամաղնութիւնն այն գիտութիւնն է որ կը ճառէ իւրաքանչիւր անդամոց վրայ, որոց միաւորութեամբ կը կազմուին ամէն կենդանական և բուսական էակներ, կամ թէ ըսեմք, գիտութիւնն՝ որ կը ճառէ ամէն կենդանական և բուսական էակաց ներքին կազմութեան վրայ։ Եւ որովհետև իւրաքանչիւր մարմնոց անդամներու հերձմամբ կամ հատմամբ կրնամք տեղեկանալ անոնց կազմութեան, այս պատճառաւ յունարէնէն կոչուած է եւրոպական անունն ալ որ կը նշանակէ անդամահատութիւն։ Անդամաղնութիւնը անծանօթ էր նախնեաց որք սրբապղծութիւն կը համարէին դիական հերձումը։

Անդամաղնիին պէտք է զգուշութեամբ գործէ հերձումներ, որպէս զի ինքն եւս չվարակի այն ախտով, զոր այլոց վրայ կը բժշկէ, իւր մարմնոյն վրայ առնլով ախտացելոյն թարախէն, կամ վերք բանալով իւր վրայ այն դանակով՝ զոր կը գործածէ անդամահատութեան համար։

ԲԱՌԱԿՐԿԻՏ

— Զը կայ բան մը մեր իմացութեան (entendement) մէջ որ զգայարանաց դռնէն մտած չը լինի։

— Մարդուն մարմինը փոշի կը դառնայ, այլ հոգին կ'ապրի իւր գործոցը մէջ։

— Մարդն ազատ է ինչպէս թռչունը վանդակի մէջ. կրնայ շարժիլ որոշեալ սահմանի մէջ։

— Շատ խօսքը միայն թուխակին արժանիքը կը բարձրացնէ։

— Կ'երևի թէ կանայք աւելի շատախօս են և արք աւելի անզգոյշ։ Արք չափաւորապէս կը խօսին, բայց չեն զսպեր միշտ իրենց լեզուն։ Կանայք որ անդադար և ամէն բանի վրայ կը խօսին, իրենց պէտք եղած բանը միայն կ'ըսեն։

— Ի՞նչ բանի կը ծառայէ խելքն, քանի որ անմիտներուն յաջողութեան վրայ իսկ մտածել կուգայ։

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ

Թղթատարական պայուսակները փոխադրող էլեկտրական գործին — Ամերիկայի Պոսթօն քաղաքին մէջ թղթատարական պայուսակները կը փոխադրուին նորահնար դրութեամբ մը։ Հնարիչք երկու Ամերիկացիներ են, Վիլիամս և Տօլպիր անուն։ Գործին կը կոչուի Բոութէլէքրիֆ. պողպատեայ գլան մ'է կոնաձև վերջաւորութեամբ, 3,50 մէթր երկայնութեամբ և 160 քիլօկրամ ծանրութեամբ։ Այդ գլան կ'ընթանայ 900 մէթր երկայնութեամբ երկաթեայ գծի մը վրայէն՝ օղակներու մէջէ անցնելով. օղակները բեռնաւորեալ են էլեքտրական հոսանքով որ յառաջ կուգայ քսան ձիու զօրութիւն ունեցող տիգամօէ մը որ կեդրոնական կայարանին մէջ հաստատուած է։ Գլանն օղակներուն մէջ այնպէս դրուած է որ ամենամեծ դիւրութեամբ կրնայ իւր առանցքին վրայ դառնալ և մէկ երկվայրկենի մէջ տասը մէթր յառաջանալ։ Իւրաքանչիւր օղակին դպած միջոցին, գլանը կ'առնու անոտի հոսանքն որ իւր մղիչ զօրութեամբ յառաջ կը վարէ գործին. սա իւր շարժման միջոցին՝ մետաղեայ սողունի մը երեւոյթը կը պարզէ դիտողին։ Այս գործին առաջին փորձերուն մէջ յաջող արդիւնք ունեցած է. հաւանական է թէ՝ Ամերիկայէն դուրս ճշմարիտ յեղափոխութիւններ յարուցանէ թղթատարական վարչութեանց մէջ։

Թէ ի՞նչ օգտակարութիւն ունի ծուխը։ — «Ոչինչ կը պակսի, ոչի՛նչ կ'աւելնայ». բնութեան ամենէն մեծ օրէնքն է այս։ Երբեմն բոլորովին անպէտ նկատուած նիւթերէն մարդ ի՞նչ մեծ օգտակարութիւններ յառաջ կը բերէ։ Այս նիւթերուն կարգէն է ծուխն, գործարանաց ծխնելոյզէն դուրս ելնող այն ծուխն, որ մթնոլորտին մէջ բարձրանալով՝ նուրբ մշուշի մը երևութին ներքև կը ծածկէ դաշտերն և գիւղերն։ Մի քանի հազար տարիներ վերջ, Լիվրբուլի նման հարստարարուհատ քաղաքներ մոխրոյ, հարպային մարմիններու թանձր խաւին ներքեւ պիտի ծածկուին, եթէ գիտութեան շնորհիւ այսօր գործարաններէ դուրս խուսարող ծուխը օգտակար շրջանակի մը մէջ չը գործածուի։ Սկովտիոյ մէջ ընկերութիւն մը կազմուած է այժմ որ երեք կամ չորս մետաղագործական հաստատութեանց գործարաններուն աւելորդ ծուխն եւ կազերը գոհացուցիչ պայմաններով կը գնէ, մեծագոյն օգուտներ ստանալու համար այրելի մարմնոց այդ արտադրութիւններէն։ Մասնաւոր գործարանաց մէջ, այդ կազերն կ'անցնին բազմաթիւ քիլոմէթր երկայնութեամբ խողովակներէ ուր պաղութեան ազդեցութեամբ կը խտանան և կը թողուն այրելի իւղերու մեծ քանակութիւն մը։ Նմանօրինակ հաստատութեանց ամենէն կարեւորն՝ Կլասքովի մէջ կազային ընկերութեան մը հիմնածն է որ օրը 60 միլիոն խորանարդ մէթր կազ կը գնէ շրջակայ գործարաններէն և մէկ շաբաթուան մէջ անպակաս կազերէն կը ժողովէ 1,135 հարիւրապատիկ իւղ։ Կը կարծէ՞ք թէ՝ միայն այրելի նիւթերով կը գոհանայ գիտութիւնը. խողովակաց ներքին կողերուն վրայէն ամենամեծ խնամոք կը ժողվեն տարրագիտական նիւթեր, ամօնիաք, ֆէնօլ, Քրէզօլ որք օգտակար գործածութիւններ ունին, ինչպէս նաև կը հաւաքեն ու կը խտացնեն ամէն կազ, տալով նմա խնայողական տեսակէտով լուսաւորելու ընտիր կարողութիւն մը։

Աղն եւ կենդանական կեանքն երկրագնտիս բարձրութեանց վրայ. — Երկրագնտին բարձր կէտերուն վրայ կենդանական կեանքը բոլորովին տարբեր պայմաններու մէջ կը գտնուի. բնագիտական օրինաց փոփոխութիւններէն դուրս, ինչպէս է օդին ճնշման զգալի նուազումն, յայտնի է թէ՝ մթնոլորտին տարրագիտական կազմութիւնը մեծ ազդեցութիւն ի գործ կը դնէ կենդանական կեանքին վրայ, քանի որ այդ տարբեր կազմութիւնը կ'ազդէ նաեւ այն բոյսերուն վրայ որք սնունդ կը մատակարարեն բարձր դադաթներուն վրայ ապրող հօտերուն։

Ծովային աղը կարևոր դեր մը կը կատարէ գործարանային կեանքին մէջ. մարսողութեան անհրաժեշտ տարրն է այն. անոր շնորհիւ սնունդները կը լուծուին և կը ծծուին մարսողական գործարանաց մէջ։ Դաս մը կենդանիներ, մանաւանդ եղներն շատ կը փընտրեն այնպիսի բոյսեր որք առատութեամբ պարունակեն աղային տարրեր։ Լեռներու վրայ, բարձրագոյն գագաթներու վրայ ապրող խաչինք զուրկ կը մնան աղէն. գիտութեան փորձերը հաստատած են թէ՝ բարձրութեանց տարբեր աստիճաններուն մէջ անձրևի ջուրերը տարբեր քանակութեամբ քլորիտ տը սոտիում կը պարունակեն, հետեւաբար աղը անհաւասար կը նրբաղի ջուրց մէջ, պէտք վեր բարձրանալ. ապացոյց չկայ որ Ալպեան հովիտները բոլորովին զուրկ են այդ տարրէն։ Բուսական կեանքն ևս աղի կողմանէ աղքատ է, ուստի առաջին փոփոխութիւնը արեան կազմութիւնը կը կրէ, երկաթի քանակութիւնը կը նրբաղի. կենդանեաց արեան մէջ. մարի շահեկան փորձերով հաստատուած է

այս՝ ձորերուն մէջէն լեռնագագաթներու վրայ փոխադրելով ոչխարաց հօտեր, որոց արեան մէջ եղող երկաթի չափը 70—40 փոփոխութիւն կրած է։

Ապակիներու նոր դրութիւն մը պատուհանաց համար. — Օգտակար խրատ մը իւր ծանրութեան չափ ոսկի կ'արժէ. միշտ մաքուր օդ շնչեցէ՛ք, մարդկային շնչաւորութիւնը կենսական գործողութիւն մ'է. ոչինչ այնքան վնասակար է օ՛րքան մնալ այնպիսի սենեկի մը մէջ ուր օդը վնասակար կազերով և միքռօպներով բեռնաւորեալ է։ Նոր տեսակ ապակի մը հնարած է Ժընէսթ և Հէրշէր տունը որ մեծ հռչակ ունի առողջապահական գործիներ գտնելուն ու վաճառելուն համար։ Ապակին իւր վրայ ունի կոնաձև ծակեր. կը դրուի պատուհանին վերի կողմը, ծակտիկներէն ներս կը մտնէ մաքուր օդն՝ սենեկին մթնոլորտը մաքրելու համար։ Տօքթէօր Շասթէնկ ուելի պարզ միջոց մը գտած է խնդիրը լուծելու համար։ Պատուհանին մէջ պէտք է հասատաեալ երկու ապակիներ, իրարմէ երկու հարիւրորդամեթր հեռաւորութեամբ։ Արտաքին ապակին կարմ է և ատորին կողմէն բացուածք մ'ունի ուսկից օդը ներս կը մտնէ և կուգայ դրաւեալ երկու ապակիներուն մէջ եղող միջոցը. օդը սենեկին մէջ կը մտնէ այն բացուածքէն որ ներքին ապակւոյն վերի կողմը կը գտնուի. այսպէս շարունակաբար փոփոխութեան մէջ կը լինի սենեկին օդը։

Մ. Գ. ՄՕԶԵԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԽՐԱՏ

Տանձէ աղձանը, թէ՛ շատ համեղ և թէ՛ դիւրին է պատրաստելը հետեւեալ եղանակաւ։ Կեղեւեցէ՛ք քանի մը ընտիր տանձ, շերտ շերտ կտրեցէ՛ք հորիզոնական, ո՛չ շատ հաստ և ո՛չ բարակ. աղձանամանի մէջ զանոնք շարելէ վերջ, փուչիացած շաքար նետեցէք վրան նախ, և ապա թրջեցէք լեմոնի քամուքով (jus)։ Ժամ մը այս վիճակին մէջ մնալէ վերջ և սեղան տանելու պահուն, գաւաթ մը մարասքինով կամ գաւաթ մը կեռասօղիով (kirseh) թրջեցէք։ Իսկ խնձորը, տանձին նման կեղեւելէ վերջ, քիչ մը բարակ սակայն, լեմոնի քամուքի մէջ լաւ մը թաթխելու և քառորդ ժամ թողելու է խեցեամի (կիւվէճ) մէջ, ուսկից առնելով, թողելու է որ ջրերը կաթին. ապա աղձանամանը դրէք ու փուչիացած շաքար նետեցէք վրան և ուտելու ժամանակ խոշորկեկ գաւաթ մը քոնեաքի կենօղիով (eau-de-vie) թրջեցէք աղձանը։ Պատրաստողին լաւ ախորժակ կը մաղթեմ։

Ժ Պ Ի Տ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Նաւային ընթացարան. — Ժընէվցի մը ժընէվ լճին վրայ նաւ-ընթացարան (vélocipède) մը փորձած է խուռն բազմութեան մը ներկայութեան։ Գործին կը բաղկանայ երկու զուգահեռական նաւակներէ՝ փայտեղէն գօտիներով միացեալ, որոց միոյն վրայ կը գտնուի շոգենաւի անոյշ նման անիւ մը։ Նաւակներն՝ որ անթափանց են ի ջրոյ՝ հինգական խորշ ունին։ Առաւել ապահովութեան համար, նաւ-ընթացարանը մասնաւոր գործի մը ունի՝ որ կաթիլ մը ջրոյ իսկ նաւակին մէջ մտնելը կ'իմացնէ։ Սոյն նաւ-ընթացարան կ'ընթանայ միջին հաշուով ժամը տասը քիլոմէթր։

Թայմզ գետին վրայի նոր կամուրջն. — Թայմզ գետին վրայի նոր կամուրջն՝ որոյ առաջին քարն գետեղեց հինգ տարի առաջ Կալլէսի իշխանն, աւարտելու մօտ է։ Սոյն նոր կամուրջ՝ որ 2640 ոտք երկայնութիւն պիտի ունենայ, պիտի լինի Թայմզի վրայ ձգուած կամուրջներուն ամենէն մեծը։ Վեց հարիւր գործաւորներ կը բանին այժմ սոյն շինութեան համար որոյ հիմունքն 66,270 խորանարդ մէթր պէդոն կոչուած շաղախ սպառեցին։ Աշտարակին կամուրջին համար գործածուեցան ցարդ 31 միլիոն աղիւս, 19,500 դօնօ կրաղիւս, 77,550 խորանարդ մէթր հատաքար և 15,000 դօնօ երկաթ ու պողպատ։ Կամուրջին շինութեան համար ընդ ամէնը պիտի երթայ առաւել քան 18,750,000 ֆր։ Ո՛չինչ գումար։ Կը յուսացուի որ եկող տարի աշնան աւարտին շինութիւնք։

Անանուն ոճիր մը. — Ամերիկայի մէջ գործուած ոճիրք Ամերիկացւոց պէս տարօրինակ են։ Նիւ-Եօրքցի Հնդիկ մը քանի մ'օրերէ ի վեր Ուաշինկթընը դարձած էր։ Իւր բարեկամները, ուզելով խնճոյք մը տալ անոր, Լիզպի Հիւկէս անուն խարշիկ պանդոկապետուհւոյ մը դիմած էին։ Կ'ըսեն թէ ճաշը ընտիր եղաւ. կերակուրներէն մին մասնաւորապէս՝ սեղանակցաց բերնին համ կուտայ, և երբ անոնցմէ մին կը հարցնէ «ի՞նչ էր կերածնիս», Լիզիին զաւակներէն մէկը կը պատասխանէ. «քոյրս էր»։

Խարշիկները՝ զարհուրած՝ ատենակալին դիմեցին. արագ հարցաքննութիւն մը, խնջոյից նշխարներուն քննութիւնն ապացուցին թէ տղայն չէր ստած. դարշելի պանդոկապետուհին իւր պզտիկ աղջիկը սպաննած և իւր յաճախորդներուն հրամցուցած էր զայն։ Պանդոկապետուհին ձերբակալուեցաւ և հաւանական է որ ընդ հուպ ենթարկուի Լինչի օրինաց։

Բ.

8) ՇԷՅՔՍՊԻՐ (1)

ՎԵՆԵՏԿՈՅ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԷՍ Բ.

ՏԵՍԻԼ Զ.

Վենետիկ

(Մտնեն Կրասիանօ եւ Սալարինօ դիմակաւորեալ։)

Կրաս. — Ահա այս կամարին տակ սպասելնիս խնդրեց Լորենցօ։

Սալար. — Իր ժամն անցաւ գրեթէ։

Կրաս. — Զարմանալի է որ կ'ուշանայ իր ժամէն, զի սիրահարք միշտ ժամէն աւելի արագ ընթանալու սովոր են։

Սալար. — Ա՜հ, Աստղիկի աղաւնիները տասն անգամ աւելի արագ կը թռին, երբ խնդիրը նորագիւտ սիրոյ մը կապերը պնդելու վրայ է քան թէ զգուշանալու համար խզելէ արդէն գրաւեալ խոստում մը։

Կրաս. — Այդ ի վաղուց այդպէս է. մեծ ախորժակով ո՞վ կ'ելնէ սեղանէն, երբ ճաշելու համար նստած է։ Ո՞ւր է այդ կարող ձին՝ դառնալու համար ճամբուն այն տաղտկալի հետքերուն վրայ զորս իւր առջի ուղեւորութեան պահուն այնչափ եռանդեամբ անցած էր։ Այս աշխարհի ամէն բանին շատ աւելի մեծ խանդով հետապնդած են քան զայնս վայելած։ Ո՛րչափ կը նմանի կընահանոյ պատանւոյ կամ շուայլ տղու մը՝ դրոշազարդ նաւ մը որ իւր ծնած ծովածոցէն կը մեկնի, անառակ հովէն փայփայուած և գիրկընդխառնեալ, և ո՛րչափ աւելի նման շուայլածախս տղու մը, կուգայ փոթորիկներէ վնասեալ կողերով, առագաստք պատառ պատառ, մաշած, ճեղքոտած, և ամէն ինչ աւար տուած յանդուգն հովին։

Սալար. — Ահա՛ Լորէնցօն։ Աւելի ուշ կ'սկսինք այս խօսակցութիւնը։

(Մտնէ Լորէնցօ)

Լորէն. — Քաղցր բարեկամք, ներողակալ եմ որ այսչափ երկար սպասեցիք ինձ. յանցանքն իմն չէր, ո՛չ, այլ գործերուս։ Երբ հաճիք դուք ալ ամուսնոյ դողեր ըլլալ, ճշդութեամբ պիտի դարձընեմ ձեզ ձեր համբերութիւնը։ Մօտենանք, ահա՛ Հրեայ հօրս տունը։ Է՛հ, ինձ նայէ, ո՞վ կայ ներսը։ (Սիգա պատուհանէն կ'երևայ մանչու հանդերձով։)

Եսիգա. — Ո՞վ էք դուք, ըսէք ինձ

(1) Տես «Ծաղիկի» Ա. տարի 46-52 թիւերը։

աւելի ապահովութեան համար։ Թէպէտ կ'երդնում որ կը ճանչեմ ձայնդ։

Լօրէ։— Լօրէնցօ և քու սէրդ։

Եսիգ։— Լօրէնցօ, անտարակոյս, և իմ սէրս արդարև, զի զո՞վ առաւել կը սիրեմ այդչափ։ Այժմ դու միայն կըրնաս ըսել թէ ես քուկդ եմ, Լօրէնցօ։

Լօր։— Երկինք և հոգիդ վկայ ըլլան ադոր։

Եսի։— Ա՛ռ, ահա՛, խլէ՛ սա արկղիկը, յոգնութիւնը կ'արժէ։ Ուրախ եմ որ գիշեր է, չես կրնար զիս դիտել, զի իմ ծպտումէս ամօթահար եմ. սէրն կոյր է և սիրահարք չեն տեսներ իրենց գործած սիրային փափկազնիւ յիմարութիւնները. թէ ոչ երես, ինքն իսկ պիտի կարմրէր զիս այսպէս մանչու փոխուած տեսնելով։

Լօր։— Իջի՛ր, վասն զի իմ ջահակիրս պիտի ըլլաս։

Եսի։— Ի՞նչ, պէտք է լո՞յս բռնեմ իմ ամօթոյս, արդէն ամօթս, սիրելիս, շատ է, շատ ի լոյս։ Բայց հոգիս, ադով բոլորովին կը յայտնուիմ և ընդհակառակը մթութեան պէտք ունիմ։

Լօրէն։— Բաւական կերպարանափոխուած ես, քաղցրուհիս, մանչու այս գեղեցիկ հագուստի մէջ։ Բայց շուտ եկո՛ւր, խոր գիշերն հասաւ և Պասանիօի խնջոյքին կ'սպասուինք։

Եսի։— Գոցեմ դռներն և հետս քանի մը տուքաթ աւելի առնում, ու անմիջապէս ձեզ հետ եմ։ (Պատուհանէն կը քաշուի)։

Կրաս։— Կ'երդնում գլխարկիս վըրայ որ սա Աղնուուհի մ'է և ոչ Հրէուհի մը։

Լօրէն։— Անէծք ինձ եթէ ի սրտէ չեմ սիրեր զինքն, զի խելացի է, եթէ լաւ է դատողութիւնս. գեղեցիկ է, եթէ չեն խաբեր աչերս. անկեղծ է, ինչպէս ցոյց տուաւ հիմա փորձով, և ահա՛ ասոր համար, խելացի, գեղեցիկ և անկեղծ ըլլալովն, իմ անյողդողդ սրտի մէջ պիտի բնակի միշտ։ (Մտնէ Եսիգա) Ո՜հ, եկա՞ր։ Ի չու, Պարոնայք, ի չու, մեր դիմակաւոր բարեկամք մեզ կ'սպասեն հիմա։ (Կ'ելնէ Լօրէնցօ Եսիգայի և Սալարինօի հետ)։

(Մտնէ Անթօնիօ)

Անթօնիօ։— Ո՞վ կայ հոն։

Կրաս։— Սինեօր Անթօնի՛օ։

Անթ։— Տէ՛հ, Կրասիանո, ո՞ւր են միւսները, ժամը ինն է, բարեկամք բոլոր մեզ կ'սպասեն։ Դիմակաւորութիւն չպիտի ըլլայ այս գիշեր, հովը յաջող է, Պասանիօ անմիջապէս նաւ պիտի նստի։ Քսանէն աւելի մարդ ղրկեցի ձեր ետեւէն։

Կրաս։— Ուրախ եմ շատ, այդկէ աւելի ուրիշ բանի չեմ բաղձար, շուտով առագաստի տակ ըլլալ և մեկնիլ այս գիշեր։

Թարգմ.
Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

(Շարունակելի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնաթերթիւրիւնք։— Նախակըրթարանաց տնօրէն անուանեցաւ Մուսթաֆա պէյ, Ա. քարտուղար նախնական վարժարանաց վարչութեան, և այս պաշտօնին կոչուեցաւ Բասիլ էֆէնտի, քննիչ երկրորդական և մասնաւոր վարժարանաց։

Ասիճանք։— Սանիէ սընրֆը միւբէմաիզի ասոլճան շնորհուեցաւ Սապանի արտօնատէր Միհրան էֆէնտիի։

Պատուանշանք։— Օսմանիէի Բ. կարգի պատուանշան տրուեցաւ Արտաքին գործոց նախարարութեան հաշուակալութեան դիւանի պետ Խաչիկեան Գրիգոր էֆէնտիի։

— Ասիական երկաթուղեաց շինութիւնը Պիլէճիքէն անդին՝ փութով յառաջ կը տարուի։

— Իւսկիւտարի մախատունը փոխադրուած է ի Հայտար Փաշա։

— Թէրճէմանը Հագիգաբէն կ'իմանամք թէ, Հայոց Պատրիարքարանը խնդրած է կառավարութենէն որ կալուածոց Ֆէրաղի և Ինթիգալի գործողութեանց համար Պատրիարքարանի կողմանէ տրուելիք ծանօթագիրք չվաւերացուին Իմամներու ու Մուխթարներու կողմանէ։ Զեռնհաս իշխանութիւնն այս մասին հրահանգ տուած է առ որ անկ է։

— Ի Ֆիլիպէ երկրագործական և ճարտարուեստական ցուցահանդէսի մը բացումը տեղի պիտի ունենայ 1892 սեպտեմբեր 6/18 ին և պիտի տեւէ մինչեւ սեպտեմբեր 30/12 հոկտեմբեր։ Ուրիշ մ'ալ պիտի կազմակերպուի ի Ռուսաստան 1893 օգոստոս 2/14 էն մինչև 18/30 հոկտեմբեր։

— Սելանիկէն կը գրեն թէ Վասիլ աւազակապետն ու չորս ընկերք պաշարուելով սպաննուեր, միւս ընկերք ձերբակալուեր են։

— 120 տարեկան պառաւ մը կ'ապրի եղեր ի Գարապուրնու Իզմիրի, մարմնով ու մտքով քաջառողջ. ունի եղեր 434 մանչ, աղջիկ, թոռ և թոռան թոռներ։

— Արեւելեան հանրային շինութեանց ընկերութիւն մը կազմուեր է ի Լոնտոն՝ Թուրքիոյ մէջ հանրօգուտ շինութեանց ձեռնարկելու և զանոնք զարգացնելու նպատակաւ։

— Եէմէնի մէջ բարեկարգութիւնը կատարելապէս հաստատուեր է։

— Ցունաց Պատրիարքարանը կ'զբաղի նոր Պատրիարքի ընտրութեան նախապատրաստութեամբ։

— Հաւիտիյէ թղթի գործարանին բացումն ի Պէյքոզ ի մօտոյ տեղի պիտի ունենայ։ Դրամագլուխս յատկացուած է 300,000 ոսկի, և ցարդ 200,000 ոսկիէն աւելի ծախսուելով զետեղուած են բոլոր մեքենայք։

— Եըմտից նախարարութեան ընդհանուր հաշուակալութեան յատուկ օրինաց ծրագիր մը պատրաստուելու վըրայ է։

— Ի Նիկոմիդիա, քաղաքին ու տեղւոյն զինուորական կերպասի գործարանին մէջև շոգեշարժ թրամուէյի դիծ մը չինելու առաջարկութիւն եղած է Պ. Տօսթօեա անուն երկրաչափի մը կողմանէ։

— Հայ երիտասարդ մ'եղեր է՝ Օսմ. կայս. Պանքային մէջ պաշտօնի կոչուելու համար մրցման քննութեան ներկայացող 68 անձանց մէջէն առաջին հանդիսացողն։

— Զնջուած է Թուրքիոյ մէջ պատրաստեալ գինիներու այլուր փոխադրութեան ժամանակ առնուած 100 փարայի տուրքը։

— Զմիւռնիոյ Պալէրք-Հատի ըսուած տեղէն ի Կէօղթէփէ, ի Բարաթաշ և մինչև ի քաղաք անուշ ջուր բերելու մենաշնորհը ստացած է Քոչոնի էֆէնտի։

— Սնանկ հռչակուած են Պէյօղլուք և Բիւշիւկ Եէնի խաներու մէջ հաստատեալ Տիգրան և Արթին Բէհեաեան անուն յանձնակատարք, և ի Մահմուտ Փաշա թիւ 144 հաստատեալ Պոխոր Ֆրէսքօ անուն վաճառականը։

— Ձերբակալուելով Սղերդ տարուեր են Աղալ Սուր օղլու Մէհմէտ և Եուսուֆ անուն աւազակներն, որք Սըղերդի, Տիգրանակերտի և Մուսուլի շրջակայից մէջ կ'սպասատակէին։ Նոյնպէս յեւդոկիա ձերբակալուեր են Բիկեանլը Աշիրէթէն Ճոխան անուն Քիւրտ աւազակն իւր երեք ընկերներով, և Սինասօղլու անուն աւազակին ընկերներէն երեք անձինք, ինչպէս և Մուսուլի կողմերը՝ Ֆէթթահ անուն աւազակապետն իւր ութ ընկերներով։ Իսկ Աստրազարի կողմը ձերբակալուեր է Լազօղլու Մուսթաֆա անուն աւազակն։

— Կայսերական հրամանի մը համաձայն, նախարարութեանց և կայսերական վարչութեանց բարձրագոյն պաշտօնատարներէն կամ սպայներէն ով որ, նոյն իսկ նախարարը լինի, հիւանդութեան պատճառաւ բացակայի, անուանը պիտի հաղորդուի ի Կայս. պալատ։

— Արձակուիլ և հայրենիք դառնալ սկսան Կայս. անձնական բանակի այն զօրքեր որք լրացուցած են իրենց

ծառայութեան պայմանաժամը։

— Հնչակեանը կը շարունակուի ի Դամասկոս։ Նախընթաց օր մայրաքաղաքէս զինուորական բժիշկներ մեկնեցան՝ հոն երթալու և ախտին տարածման դէմ մաքառելու համար։ Ի Հալէպ, առողջական վիճակը գոհացուցիչ է։

— Կէյվէի եւ Լէֆէէի միջեւ գծէն դուրս ելեր է երկաթուղւոյ աւազ կը-րող կառախումբ մը։ Կ'ըսուի թէ չորս հոգի մեռած են, որոց դիակները Պոլիս բերուած են։

— Սամսունի նաւահինները չորցնելու և նաւամատոյց մը շինելու համար աշխատութիւնք յառաջ կը տարուին փութով, և յոյս կայ որ մինչեւ երկու ամիս աւարտին։

— Օսմ. Կայս. Պանքային կողմանէ ի Եանեա մասնաճիւղ մը բացուիլը խնդրած են տեղւոյն վաճառականք։

— Զինուորական յանձնախումբն, որ ի գաւառս քննութիւններ կատարելու պաշտօնով կը շրջի, Իւնիայի մէջ աւարտելով իւր աշխատութիւններն, մեկնած է անտի ի Սեբաստիա։

—Ադիսամանառ եւ փայտամանառ ի կարգ պիտի հրաւիրուին Բաղաքապետութեան կողմանէ՝ բարձրացուցած լինելով ածուխի և փայտի գիներն։

— Իրանագիտական վարժարանի աշակերտք՝ իրենց տնօրէն Ազիզ պէյի դէմ Մեծ-Եպարքոսին բողոքագիր մը տուեր են հարկ եղած ապացոյցներով։ Ազիզ պէյ պաշտօնանկ եղեր է։

— 20 չարագործներ հեռաւոր տեղեր զրկուեցան չորեքշաբթի օր։

— Ռուսդուբեան հրամանագրի համար յետ այսորիկ 40 զրշ. պիտի առնուի մայրաքաղաքիս համար 40 զրշ քաղաքաց համար 20, և 10 զրշ ուրիշ տեղերու համար։

— 1000 ծրար ամերիկա հանգանակեր է յեւրոպա՝ Միքայէլ էֆ. Յակոբեան, ի նպաստ Ազգ. Հիւանդանոցին։

— Թօփհանէի վարչութիւնը 6356 ոսկւոյ գնած է 2000 կալ տարածութեամբ ագարակ մը որ կը գտնուի Զանագ-Գալէի և Բում-Գալէի միջև, Էրէնքէոյի քառանթինա ըսուած տեղն։ Ագարակն ունի ջաղացք մը որ օրը 160 պարկ ալիւր կրնայ աղալ։

— Պապական նուիրակ Տէր Պոնէթի մայրաքաղաքէս մեկնեցաւ ի Սելանիկ։

— Բալէէի նոր կուսակալ Թահսին փաշա երեքշաբթի օր Տրապիզոն հասեր և օր մը հոն մնալէ յետոյ մեկներ է յիւր պաշտօնատեղին։

— Օսմ. կայս. Պանքան մէկ մէկ մասնաճիւղեր հաստատած է նաև ի Սամսուն և ի Տրապիզոն։

— 40 տուն գաղթական ի Սելանիկ և 500 գաղթական ի Մուտանիա ղրկուեցան։

— Նոր չափուց եւ կշռոց գործածութիւնն սկիզբն ի վեր դժուարութեանց և վնասուց ենթարկած լինելով ժողովուրդը. կայս. հրամանի մը համաձայն կառավարական շրջանակաց մէջ սկսած են զբաղիլ այս խնդրով։ Արհեստաւորաց ներկայացուցիչք Բաղաքապետութեան կողմանէ կանչուելով և այս մասին իրենց կարծիքն հարցուելով, պատասխաներ են թէ իրենք նախապատիւ կը համարին հին չափուց և կշռոց գործածութիւնը։ Խնդիրն այժմ Պետական Խորհուրդը մտած է։

— Այտընի նահանգին կուսակալ Ապտիւլ-Բահման փաշա երէկ առաւօտ ի Զմիւռնիա հասեր է։

— Տէտէ Աղանի կողմերը Տէրսիէնտ Սաղիր գիւղին ասնավաճառը այս տարի ևս տեղի ունենալով, ամենայն կանոնաւորութեամբ վերջացեր և վաճառականք ապահովապէս իրենց տեղերը դարձեր են։

— Պօսնա Սարայի քաղքին լուսաւորութեանը համար 360 հազար ֆիորին, այսինքն 3 միլիոն 600 հազար ղրուշ ծախսել որոշեր է տեղւոյն քաղաքապետութիւնը։

— Ասիկանութիւնը յաջողեր է գտնել որջն այն աւազակաց որք Սելանիկէն լեռը տարած էին երեք Պուլկարներ, որոցմէ կը պահանջէին, մէկէն 100 ոսկի և միւսներէն աւելի պակաս գումարներ։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ԾԱՂԻԿ»Ի

Խ. Զ. Տրապիզոն. — *Ստացած եմք ժամանակին։*

Մ. Յ. Ս. Էսիրնէ. — *Ժամանակին ստացած եմք այդ գիրքը։*

Դ. Վ. Յ. Երուսաղէմ. — «Ծաղիկ Մանկանց»ի մինչև 22րդ թիւը հրատարակուած է։— Կրնաք ղրկել, բայց հրատարակութեան յարմար տեսնուածները միայն կը հրատարակուին։

Ս. Պ. Պ. Այնթապ. — Կ'ընդունուի։

Յ. Գ. Մ. Հալէպ. — *Ստացանք 26 ղրուշը։*

Ա. Բ. Սունկուրլու. — *Ձեր ուղած գրքերը ղրկուած են. կը պարտիք 3 ղրշ. 10 փարա եւս։*

Ս. Յ. Ե. Խարբերդ, Մէզրէ. — *Զը շարունակուիր։*

Ս. Ա. Է. Աֆիոն-Գարահիսար. — *Կ'ըսէք թէ «Ծաղիկ»ի վերջին թուոյն տեղ «ուրիշ անուամբ լրագիր մը» ստացեր էք, և զարմանք կը յայտնէք։ Թէ՛ ինչպէս եղեր է որ «Ծաղիկ»ի տեղ այդ «ուրիշ» լրագիրն ստացեր էք, տեղեկութիւն չունիմք. մեք «Ծաղիկ»ի բոլոր թիւերը ղրկած եմք։*

Մ. Ս. Բաբերդ. — *Մինչև որ չտեսնեմք, չեմք կարող որոշել հրատարակիլը կամ ո՛չ։— Ապառիկ յանձնարարութիւն չկատարուիր։*

Տեղւոյ անձկութեան պատճառաւ, մի քանի կարեւոր յօդուածներ յաջորդ անգամի կը մնան։



Թէեւ «Ծաղիկ»ի վերջին թուով 60 ղրշ նշանակուած էր լրագրոյս տարեգինը, բայց ըստ որում տակաւին չէ կարգադրուած պատկերներու խնդիրը, առ այժմ բաժնեգիները պիտի ընդունիմք տարեկան 50 ղրշ.ի հաշուով, թէ՛ Պոլսոյ և թէ՛ Գաւառաց համար։ Հատը 40 փարա։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիզի «Հայերէն Գրքերի Հրատարակութեան» Ընկերութեան

Թիֆլիզի Հայոց հրատարակչական ընկերութեան վարչութիւնը ցանկալով հրատարակել Յ. Պարոնեանի կենսագրութիւնը՝ այդ պատրաստողին վարձատրութիւն է խոստանում տպագրական թերթին 25 ռուբլի, եթէ միայն ընկերութեանս խմբագրական մասնաժողովից հաւանութիւն կը գտնի։

Վարչութեանս կարելի է դիմել այս հասցէով. Տփխիս, Բարոնսկաեա փողոց, տուն Սահակեանի։

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

Կողակից Գաբամանի Մհ. Յովհաննէս էֆէնտիի եւ մայր «Ծաղիկ»ի աւ-խատակից Գաբամանեան Սիմոն եւ եղբարցն՝ Միհրան եւ Տիգրան էֆէնտիներու

Հանգեաւ ի Տէր ի հասակի 55 ամաց՝ ծանրաթախիծ սգով համակելով իւր համայն սիրելիքն։

Հանգուցեալին մարմինը փոխադրուելով իւր բնակարանէն՝ որ յիճատիէ, նորին յուղարկաւորութիւնը պիտի կատարուի վաղը, կիւրակի, ի ժամ 7, ի Ս. Խաչ Եկեղեցւոջ Իւսկիւտարու։

Երկնից մխիթարութիւնը կը հայցեմք հանգուցեալ առաքինի տիկնոջ ամուսնոյն, հարազատաց և համայն սիրելեաց։

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ

Օսմ. լիրան 100 զրշ. է։

Մէճիտիէ	107	9	Վենետիկ	103	
Գաւարդ մէճիտ	106		Բուսիոյ բոլ	89	30
Մանր մէճիտ	102	20	Նաբոլէոն	87	12
Մէխմալիք	98	30	Դրեսդեն	51	15
Հինգնոց	102		Անգլ. լիրա	110	2

Մանէթ թղթադրամ 8 88

Պանսոլիան	19	2	Բուլ. երկ.	59	5/8
Թահսիլ Օսմ.	70	14	Թասվիլ	21	

8)

ՄԵՌԵԱԼ ԿԻՆԸ[1]

Ա.

Պ. տը Վօտռիգուռի և օրիորդ տը Գուռթհէօզի ամուսնութիւնը յաջորդ տարւոյ յունվար ամսոյն սկիզբները տեղի ունեցաւ։ Մի քանի շաբաթներ անցան մինչև որ սոյն նորապսակ ամուլք իրենց բնակութիւնը հաստատեցին Մօնսօ թաղին մի գեղեցիկ ապարանքին մէջ. ապա տէր և տիկին տը Վօտռիդուռ յիտալիա ուղեւորեցան։ Մասնաւոր դէպք մը, ոչ բոլորովին անակնկալ, կրճատեց իրենց ճամբորդութիւնը. ուստի ի Բարիզ դարձան ապրիլ ամսոյ վերջերը։ Ճշդիւ խօսելով, այն ատեն էր միայն որ կ'սկսէր նոցա համար ընտանեկան կենաց փորձութիւնը։

Հաղուագիւտ է որ կին մը երջանիկ չը լինի իւր ամուսնութեան առաջին տարւոյն մէջ —եթէ սակայն նա չհանդիպի ճիւաղի մը, ինչ որ միշտ բացառութիւն կը կազմէ։ Եթէ մի քանի ամսէն յղի մնալու թանկագին առաւելութիւնն ունենայ, որպէս տիկին տը Վօտռիգուռ, դժուարութիւնք՝ այսու ալ աւելի կը յապաղին։ Այդ բոլորովին նորահաստատ կապն զոր սովորութիւնն հուսկ ուրեմն պիտի թուլացնէ և որ սակայն յայնժամ հզօրագոյն է քան երբէք, ամուսնոյն վրայ պարտք կը դնէ գորովիլ հանդէպ իւր կնոջ և կը հարկադրէ զինքը փոքր ինչ հաճոյակատար լինել։ Բաց ատի, հօր և մօր մէջ խօսակցութեան նիւթ մ'է այն, միշտ պատրաստ, հեշտին, առատ և երկուքին համար ալ հաւասարապէս յանկուցիչ։ Վերջապէս, եթէ ամուսինը, ինչպէս երբեմն կը պատահի, ցաւ ի սիրտ յիշէ իւր նոր վիճակին մէջ նախորդ կենաց փառքը, եթէ թողած է իւր ակումբին կամ առանձնասենեկաց մէջ և կամ այլուր սովորութիւններ որոց կ'սկսի ախորութեամբ գլուխ դարձնել, կը համբերէ, կ'ըսէ իւրովի թէ ներկայ վիճակը պատահար մ'է միայն, թէ անցողական ժամանակամիջոց մ'է այն, և թէ օրէ օր յապաղուած բան մը կորսուած չը համարուիր։ Եւ այսպէս ընտանեկան յարկին մէջ խռովութիւն չծագիր և ամէն ոք գոհ է. կինն այնու՝ զի կը համոզուի թէ սոյն կացութիւնը միշտ այսպէս պիտի յարատեւէ, և ամուսինն այնու՝ զի համոզուած է թէ հակառակը տեղի պիտի ունենայ։

Այսու հանդերձ ամուսնական կենաց այս առաջին և երանելի ժամանակը տիկին տը Վօտռիգուռի համար առանց դառնութեան լինելու չէր։ Հէգն Ալիէթ որ չ'էր անգիտանար թէ Պեռնառ և նորա հօրեղբայրն իւր վրայ դրած էին յոյսեր՝ իւրեանց ընտանեկան անուան մշանջենաւորութեանն համար, մեծ վիշտ զգաց աղջիկ զաւակ մը ծնելուն, յոյժ սիրուն իրաւի, բայց վերջապէս աղջիկ մը։ Արտասուագին ներում խնդրեց Պ. տը Վօտռիգուռէ, որ մը-խիթարեց զնա իւր սովորական շնորհալի ձեւերովն, զուարթօրէն ըսելով նմա թէ անշուշտ օրին մէկը պիտի իրագործուէր իրենց փափաքը, և թէ այս փոքրիկ վրիպանքն ըստ բաւականին կը մեկնուէր այն յուզմամբ որ անմեկին է ամէն գործոց սկզբնաւորութենէն։

Բաց ատի, տիկին տը Վօտռիգուռ իւր աղջիկը չկարենալ դիեցուցանելու վիշտն եւս ունեցաւ. այսու հանդերձ անոր նուիրեց իւր ժամանակն ու խնամքը՝ պարտաճանաչութեան այն խորին զգացմամբ և գորովոյ այն եռանդեամբ որք յատուկ էին իրեն։ Ամուսնութեան նախնական աւուրց մէջ իւր աղջիկը յարմար պատրուակ մ'եղաւ, մերժելու համար հրաւէրներ որք կ'ստիպէին զինքը ներկայ գտնուիլ բարիզեան փառաւոր սրահներու մէջ ուր՝ իւր ամուսնութիւնն ընդ կենցաղատէր և յարգելի տը Վօտռիգուռ դերակոմսին, իրեն կ'ապահովէր յաջողութիւն մը, եթէ ոչ բուռն համակրութեան, դէթ բուռն հետաքրքրութեան։ Արդէն սոյն պարագայ կը պատշաճէր դիւրացնելու գործադրութիւնն իւր կենաց ծրագրին զոր գծած էր հետեւողութեամբ իւր հօրեղբօր խորհրդոց և որոյ մէջ քիչ տեղ դրաւելու էին աշխարհիս սովորական հաճոյքներն։ Տը Գուռթհէօզ երէցն և իւր եղբօր աղջիկը, առանց երբէք ի Բարիզ բնակած լինելու դէթ երբեմնակի և կարճ տեւողութեամբ, երկուքն ալ արթուն և ուշադիր էին ըստ բաւականին ճշդովին գնահատելու համար Բարիզու աշխարհային կենաց նկարագիրը։ Այդ գնահատումը չէին կատարեր ո՛չ ջերմեռանդ հոգւոյ մը խռովայոյզ նախապաշարումներով, ո՛չ ալ գաւառացւոյ մը մտաց յատուկ խրաչոտ զգաստութեամբ, այլ ընդհակառակը փոքր ինչ միամտօրէն կը վարուէին, մի միայն ըմբռնելով թէ յաճախակի ներկայացող առիթներու զանազանութիւնն չափազանց զեղխութիւն յառաջ բերելու էր բարիզեան կենաց մէջ, զեղխութիւն՝ որ չէր հաշտուեր կենաց լրջութեան վրայ իւրեանց կազմած գաղափարին հետ։ Տիկին տը Վօտռիգուռ, որ շրջահայեաց էին մ'էր, որչա՛փ առաւել խորասուզուեցաւ բարիզեան միջավայրին մէջ, նոյնչա՛փ չուտով նշմարեց թէ ոչ միայն զբօսանաց չատութիւնը, այլ նաև նոցա բնութիւնն անհամաձայն կը գտնուէր իւր առած դաստիարակութեան և անձնական զգացմանց հետ։ Այս ամէնքը՝ իւր կենաց այս շրջանին մէջ, դեռ մի միայն անորոշ տեսիլ մը և անծանօթ և անհաճոյ իրաց տարտամ զգացումն կը կազմէին։ Բայց այս ամէնքը բաւական եղան սահմանափակուելու համար այն յայտագրին մէջ զոր վճռած էր ընդունիլ, ոչ թէ միայն անոր համար որ այդ յայտագիր կը պատշաճէր իւր ճաշակին, այլ վասն զի յարմարագոյնը կը թուէր իրեն՝ իւր միտքը կրաղեցնող խորհրդոյն՝, այսինքն ամուսնոյն հոգևոր դարձին իրագործմանը։

Իւր հօրեղբօր հրահանգներն որք համաձայն էին իւր անձնական ներշնչմանց, զգալի ըրած էին իրեն թէ որքա՞ն վտանգաւոր էր ուղղակի դարձի մը որ և է փորձն ընել Պեռնառի մտաց վրայ։

— Բարի օրինակ եղիր, ըսած էր իրեն, խմաստուն եկեղեցականը։ Ամուսնոյդ հետ կրօնական խնդրոյ վրայ մի՛ վիճիր երբէք, ո՛չ յանդիմանութեամբ, ո՛չ յորդորանօք, ո՛չ իսկ ակնարկութիւններով։ Այդու պիտի տաղտակացնես զինքը և խորշեցնես կրօնքէն։ Մի միայն ցոյց տուր իրեն բարի քրիստոնէի մը տան քաղցրութիւնը աշխարհիս անկարգութեանց մէջ, ջանա՛ ճանչցնել զքեզ, սիրցնել և օրհնել, որպէս զի ճանաչէ, սիրէ և օրհնէ զամենաբարին Աստուած որ ստեղծած է զքեզ այնպէս որպէս դու ես։

Ստիպողական այցելութեանց տաղտկացուցիչ շրջանը կատարելէ վերջ, տիկին տը Վօտռիգուռ իւր մայրական պարտաւորութիւնները պատրուակելով յարաբերութիւնները սահմանափակեց ամուսնոյն ազգականացը և մասնաւոր բարեկամացն անձուկ շրջանակին մէջ։ Արդէն ըստ կարելւոյն տունը կը մնար, ի տես ածելով իւր բնակարանը զարդարելու համար գաւառացի քնքոյշ տանտիկնոջ մը բոլոր յատկութիւններն և վայելչասէր կնոջ սեպհական արուեստագէտ ճաշակը։ Իւր դահլիճն և առանձնասենեակը, լի դալարեօք և ծաղկամբք, իւրեանց խորհրդաւոր կարգաւորութեանց մէջ հեշտ առանձնութեան և շնորհալից մտերմութեան սրտագրաւ հրապոյրը կ'ընծայէին։ Սոյն քաղցր և ճարտար հնարագիտութեանց մէջ որոց կատարելագործման համար իւրաքանչիւր օր երկար ժամեր կ'անցնէր, պէտք է խոստովանիլ թէ անխնայ հեռացած էր ԺԴ. Լուդովիկոսի դա-

(1) Տես «Ծաղիկի» Ա. տարւոյ 46–52 թիւերը։

րուն խիստ ոճէն։ բայց նախ և առաջ պարտ էր հաճելի երեւիլ իւր ամուսնոյն և տիրոջ, և համակերպիլ նորա թերութեանց։ Իբրև ամոքիչ սոյն դոյզն ինչ մեղմ փափկանկատութեանց, Ալիէթ մատենադարանի վերածած էր իւր սրբահներէն մին և ակնածութեամբ կարգադրած էր անդ, Հռովմէական կիսարձաններուն մէջ, իւր հօր գրքերն զորս Վառավիլէն իւր հետ բերած էր։ Երազած փափաքն էր յաճախ ընթեռնուլ այդ սիրեցեալ հնաւուրց գրքերն, իւր ե. ղբայրասարդ ամուսնոյն հետ որ նմանապէս յոյժ սիրելի էր իրեն։

Աւելորդ է ըսել թէ բնակարանին այն մասը որ Պարոն տը Վօտռիգուռի յատկացուած էր, սոյն աղնուականին կը վերապահէր այնպիսի անակնկալ զարմանք և պատուսիրական խնամք որք ապահովաբար սպասաւորացը կողմանէ պատրաստուած լինելու չէին իրեն։ Պ. տը Վօտռիգուռ իւր անձին չափազանց հոգ կը տանէր և սակայն բոլորովին զուրկ էր կարգապահութենէ, նման իւր դասակարգին վերաբերեալ անձանց մեծամասնութեան. կը սիրէր սակայն կարգապահութիւնը, կը բաւէր որ նովաւ զբաղելու հոգը չունենար։ Արդարև ըուռն և նորօրինակ գոհունակութիւն մ'էր իրեն համար տեսնել, նոյն իսկ իւր անձնական բնակարանին մէջ, կարգ կանոն՝ փափկաճաշակ կատարելութեամբ մը, և չկարենալ թաշկինակ մը կամ զոյգ մը ձեռնոց առնուլ՝ առանց շնչելու քսակիկներու այն անոյշ թարմ հոտը զորս յաւերժահարսունք գաղտնագողի կը սահեցնէին իւր դարաններուն մէջ։

Այն ամէն հրապոյրներու շարքին մէջ զորս մանկամարդ դերակոմսուհին կ'սահեցնէր՝ յանկուցիչ ընծայելու համար ընտանեկան յարկն, նուազագոյն վստահութիւն ունէր իւր իսկ անձին վրայ ուր պարտ էր կեդրոնացնել իւր մեծագոյն յոյսը։ Չէ թէ միայն սիրուն էր, այլ և յոյժ ինքնատիպ և նորանշան տեսակ մը հրապոյր կուտային իւր անձին լուրջ աղջկան մը յատուկ դեղեցկութիւնը, դիւրաշարժ քալուածքը, մաքրափայլ ճակատը, և խորաթափանց նայուածքը, որ զմրուխտի մը շողերը կ'արձակէր։ Մի քանի ամիս ի Բարիզ կենակցութիւն մը մինչև ի կատարելութիւն մղած էր իւր բնական ճաշակը, և իւր արդուզարդը կը կրէր այն անբիծ, համեստ և ուղիղ վայելչութիւնը որ զայս անգիտացողաց կարէ ուսուցանել թէ ի՞նչ է ազնուութիւն բառին նշանակութիւնը։ Բաց ասի, ինչպէս արդէն ծանօթ է, քաջահմուտ, լաւ մշակեալ և բեղուն մտքի տէր կին մ'էր նա, թերևս քիչ մը սեղմ գաղափարներով, բայց դէթ զուրկ ո և է հետեւականութենէ։

Բոլոր այդ փափուկ հրապուրանաց հանդէպ Պեռնառ դերակոմսն անզգայ չէր գտնուեր, բայց ինչ որ նոցա հաճոյքն կատարելապէս թոյլ չէր տար վայելել, սա է թէ քաջ կ'ըմբռնէր այդ հնարքներուն գաղտնի չարժառիթը։ Անհունապէս պարկեշտ, շնորհալից և հանճարեղ կը գտնէր իւր կինը, բայց այսու հանդերձ կ'զգար թէ նա ղինքն վանդակի մէջ փակելու կը հետամտէր, տակաւ առ տակաւ ընտելացընելու և ուսուցանելու համար իրեն՝ երգել իւր սիրուն եղանակները։ Պարոն տը Վօտռիգուռ իւրովի մեղմիւ կը ժըպտէր առ այս, և տակաւին սիրահարեալ և ի բնէ ազնիւ անձի մը շնորհալի բարեսրտութեամբն, իւր կնոջ դիւանագիտութեան հաւանելով հանդերձ, չէր ուզեր իւր հաճոյակատարութիւնը հասցնել մինչև մտածելու և գործելու ազատութիւնը լքանելու աստիճանին։ Ալիէթի արժանիքը՝ ճանաչելով հանդերձ, առանց թաքուն վշտի չէր որ կը տեսնէր զնա իւր մայրական պարտաւորութեանց մէջ փակուած՝ գըրեթէ դոլորովին խոյս տալով բարիզեան կենաց հոսանքէն, և ի մի բառ տեսակ մը անապատական կենաց մէջ առանձնացեալ։ Անշուշտ նա կը գնահատէր իւր կնոջ մտերմական տեսակցութիւնը, նորա մտաց և խօսակցութեան հնարքները. բայց և այնպէս միշտ փոքր ինչ անհանգիստ կ'զգար զինքն նորա հետ ի միասին դտնուած պահուն, պատճառաւ մը որ դիւրին էր ըմբռնել։ Շատ քիչ նիւթեր կան խօսակցութեան, եթէ երբէք կան, որք, այս կամ այն կողմանէ չը շօշափեն կրօնական խնդիրն, որ արդարև հիմն է ամենայնի։ Զայս հազիւ երբէք կը նշմարեմք ընկերութեան մը մէջ, որպէս է մերն, որ ընդհանրապէս անտարբերներէ և սկեպտիկեաններէ կը բաղկանայ։ Բայց եթէ դիպուածաւ մարդ դտնուի ջերմեռանդ հաւատացեալ մը ներկայութեան,— խօսակցութեան նիւթը թա՛ղ լինի արուեստ, գիտութիւն, գրականութիւն, կամ քաղաքականութիւն,— այն ատեն մարդ կ'զգայ թէ նեղը կը մտնէ, կ'զգայ մէն մի վայրկեան թէ կրօնական խնդիր պիտի ծագի որ պիտի վիրաւորէ զգացումներ զորս կ'ուզէ յարգել։ Այսպէս է որ Պարոն տը Վօտռիգուռ և իւր կինը, թէ՛ իւրեանց մտերմական խօսակցութեան միջոցին, թէ՛ ի միասին ընթերցումներ ըրած, թէ՛ թանգարաններու կամ թատրոններու մէջ իւրեանց կրած տպաւորութիւնները փոխանակած միջոցին, միշտ չփոթութեան մէջ կը գտնէին զիրենք այն նիւթին համար որու վրայ խօսիլ արգիլուած էր իրենց։

Պեռնառ դերակոմսն, եթէ ընթերցողը հաճի յիշել, այն ատենէն իսկ երբ սիրահարեալ էր օրիորդ տը Գուռթէյօզի, կարծած էր թէ ի Բարիզ բնակութիւնը շուտով պիտի նըւազէր իւր սիրուհւոյն կրօնական ծայրայեղութիւնները և սահման պիտի դնէր իւր խստաբարոյ առաքինութեանց, պահելով միայն անհրաժեշտ մասն։ Բայց եթէ նա յամառէր ի Բարիզ ևս շարունակել իւր անբնտել մենակեցութիւնը, նուիրելով իւր ժամանակը մի միայն Աստուծոյ, ամուսնոյն և աղջկան, ահա՛ այդ էր յուսահատեցուցիչ պարագայն։ Պարոն տը Վօտռիգուռ իրրև պատուաւոր անձ քաջ կ'ըմբռնէր թէ որպիսի անխիղճ գործ կատարած պիտի լինէր, եթէ փորձէր իւր կինը շուայտութեան մղել, և սակայն, եթէ կարենար համեստօրէն զնա իւր չափազանց խստակրօնութենէն մի քիչ խստորցնել, այնպէս կը թուէր իրեն թէ նա մեծապէս պիտի օգտուէր, ինչպէս և ինքը։— Երեկոյ մը, երբ ճաշէն վերջ, իւր դրատան մէջ կը ծխէր, խորհեցաւ թէ պիտի կարենայ, առանց իւր կինը գլխէ հանած լինելու, առաջարկել նմա երթալ քաղքին թատրոններէն մէյն մէջ հանդիսատես լինել Մոլլանգառի վեց կանայք վերտառեալ թատերախաղին, որ յայնժամ հետզհետէ յաջողութիւն կը գտնէր և որոյ հատակտորներն ամէն դահլիճներու մէջ կը կրկնուէին։

— Բայց վերջապէս, սիրելիդ իմ Ալիէթ, կ'ըսէր Պեռնառ, արդարեւ չափազանց անտարբեր կ'երեւիք աշխարհիս գործոց։ Դեռատի աղջկանց մեծագոյն մասն այժմ գլխաւորաբար կ'ամուսնանայ Ֆոլի-Պէռժէռ երթալու նպատակաւ. անշուշտ չափազանցութիւն մ'է այս, բայց դուք ևս ուրիշ չափազանցութիւն մը չէ՞ք գործեր, երբ կը կարծէք թէ ամէն թատրոն որ չէ Թէաթռը-Ֆռանսէն կամ Օբէռան, վայր մ'է կորստեան։

— Մոլլանգառի վեց կանայք, սիրելի, դոչեց Ալիէթ, խոկուն դէմքով մը։

— Այո՛, յարեց Պեռնառ։ — Անշուշտ այդ թատերգութիւն Սիսը չէ, ոչ ալ Բրիտանիկոսը,— զաւեշտ մ'է... բայց ի՞նչ... խորհուրդ հարցնենք ձեր պատգամներուն։ Խնդրեմ, հաճեցէք ինձ տալ Մոլիէռի երկրորդ հատորը, այն՝ յորում կը գտնուի Կանանց Դպրոցի Քննադատութիւնը...։ Ահա՛ կ'ընթեռնում Աւստրիոյ Անն դշխոյին ձօնեալ գրոյն մէջ ճիշդ այն խօսքերն որք կարծես Վօտռիգուռի դերակոմսուհւոյն համար գրուած են. — «Բարեբաստիկ կը հաշմարիմ անձս այնու զի կարող եմ տակաւին վայելել պատիւն զբօսցնելու Ձեր Վեհափառութիւնն, որ այնքան քաջ ցոյց կ'ուտայ թէ ճշմարիտ ջերմեռանդութիւնը չընդդիմանար բնաւ պարկեշտ զբօսանաց... և թէ չարհամարհէր ժպտիլ այն բերնով որով այնքա՞ն լաւ կ'աղօթէ զԱստուած...»։ Է՜հ, սիրելիս, ի՞նչ կ'ըսէք։

(Շարունակելի)

Նոր Դասագրքեր

ՊԱՏՐԱՍՏԵԱԼ Ի Ց. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆԷ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. ՊՕԼՍՈՅ եւ շրջակայից, յատակագիծ պատկերով Վոսփորի. Ցաւելուած՝ Կ. Պոլսոյ խանութրուն ընդհանուր ցուցակը. Վարժարանաց եւ ժողովրդեան համար..... 100 Փարա.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ Նախապատրաստական դասագիրք. Բնական, Ուսումնական եւ Քաղաքական։ Բ. տպագրութիւն հիմնովին բարեփոխեալ եւ ճոխացեալ՝ մանկավարժութեան նորոգոյն պահանջմանց համաձայն .... 3 Ղրշ.

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ Հանդերձ Աշխարհացոյց տախտակօք. Բնական, Քաղաքական եւ Տնտեսական..... Ղրշ.

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ Նախապատրաստական Դասագիրք. Մտաւոր եւ Գրաւոր. Դ. տպագրութիւն. — Մանկավարժական նոր եւ դիւրուսոյց եղանակաւ պատրաստուած եւ մանկական բազմաթիւ պարզ եւ ընտանի խնդիրներով ճոխացած..... 3 Ղրշ.

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ Նոր Դասագիրք. Տեսական եւ Գործնական. Մանկավարժական նոր եւ դիւրուսոյց եղանակաւ եւ պարզ ու դիւրըմբռնելի ապացուցութեամբք պատրաստուած. կը բաժնուի երեք մասերու.

Մասն Ա. — Զորս գործողութիւն ամբողջ թուոց, 600 ի մօտ հրահանգներով եւ գործնական խնդիրներով. Բ. տպագրութիւն բարեփոխեալ եւ ճոխացեալ..... 4 Ղրշ.

Մասն Բ. — Չափք, կշիռք եւ դրամք. Տասնորդական Կոտորակք. Ցատկութիւնք թուոց. Հասարակ Կոտորակք. Թուրքիոյ հին եւ նոր չափուց եւ կշռոց բաղդատութիւնը. Թուրքիոյ հին եւ նոր չափուց եւ կշռոց գիներուն բաղդատութիւնը. մօտ 500 հրահանգք եւ գործնական խնդիրք. Աղիւսակք..... 4 Ղրշ.

Մասն Գ. — Կշռութիւն եւ Համեմատութիւն. Երից կանոն. Շաւու Կանոն. Ձեղջման Կանոն. Միջին պայմանաժամու Կանոն. Միջնորդչէք. Հարիւրին այսչափ շահ կամ վնաս. Ընկերութեան Կանոն. Խառնուրդ, Մետաղաց բաղադրութիւն. Քառակուսի եւ Քառակուսի արմատ. Խորանարդ եւ Խորանարդ արմատ. 500 է աւելի գործնական խնդիրք, եւայլն, եւայլն..... 4 Ղրշ.

Ա. եւ Բ. Մասունք միասին կազմուած..... 7 ½ »

Ա. Բ. Գ. Մասունք միասին կազմուած..... 10 Ղրշ.

ՌԱՆԱԼԻ ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ. Պատասխանիք եւ պատճառաբանեալ լուծմունք հրահանգաց եւ խնդրոց՝ Ա. Բ. Գ. մասանց Թուագիտութեան (Հրատարակելի)։

Ընթացք Յ. Թ. Հիւսլեանի

ՎԱՍՆ ՈՒՍՄԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐՔ ՖՐԱՆՍԵՐԷՆԷ Ի ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ. Ա. ՏԱՐԻ. *հանրերէն ընթերցանութիւն, բերականութիւն, զրուցագրական վարժութիւնքով և բառագիտական* (lexicologique) *բառարանիկ*, էջ 148։ Գին 4 ղրուշ։ Վարդապետ Յովսեփեան խորհրդոյ։ *Սոյն նոր դասագիրքն՝ Միակ իւր տեսակին մէջ՝ կը պարունակէ էջէ պարզ ու դիւրըմբռնելի հատուածներ թարգմանութեան, զանազան նիւթերու վրայ (իրագիտական, բարոյավէպ, ոտանաւոր, նամակ, եւն)։ Գործը բաժնուած է երկու մասերու։ Ա. Մասի բառերը հատուածին վրայ նշանակուած են։ Իւրաքանչիւր հատուածէ առաջ ընթերցանութեան կանոններ ու դասեր, որոյ մէջ կը գտնուին զարուզի արտասանութիւն ունեցող բառերն եւս։ Իւրաքանչիւր հատուածէ վերջ հարցարան մը՝ գրուցատրութեան համար։ Բ. Մասին մէջ էջաբոր պարզանութիւններ քերականութեան Ա. Մասին (Մասունք բանի) վրայ։ Գործոյն ամբողջ ընթացքին մէջ քերականական ծանօթութիւնք և դժուարըմբռնելի մասանց բացատրութիւնք։ Բ. Մասի բառերուն համար բառագիտական բառգրքուկ, ուր բառից քով նշանակուած են հոմանիշք, նմանաձայնք. իրենց ընտանեաց վերաբերող ուրիշ բառեր, եւն։ Բայից նախնական ժամանակք և անկանոնութիւնք նշանակուած։*

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ՖՐԱՆՍԵՐԷՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ. Ա. ՏԱՐԻ. էջ 296։ Գին 6 ղրուշ։ *Կ'աւանդէ Ֆբռանս. քերականութեան Ա. Մասի (Մասունք բանի) կանոններն և կարգ մը կարևոր գիտելիք։ Բազմաթիւ հրահանգք փոխադարձ թարգմանութեան։ Իւրաքանչիւր հրահանգէ վերջ խօսակցութիւն։*

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ ՖՐԱՆՍԵՐԷՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ. Բ. ՏԱՐԻ. էջ 160։ Գին 5 ղրուշ։ *Կ'աւանդէ Ֆբռանսերէն քերականութեան Բ. Մասի (Համաձայնութիւն) կանոններն և կարգ մը կարևոր գիտելիք։ Բազմաթիւ հրահանգք Հայերէնէ ի Ֆռանսերէն թարգմանութեան (բարոյավէպ, իրագիտական, ընտանեկան և վաճառականական նամակք, եւն)։ Կանոններուն վրայ մասնաւոր վարժութիւն ի Ֆռանսերէն թարգմանելի։ Բառագրքուկ Հայերենէ ի Ֆռանսերէն։*

Սոյն դասագրոց կեդրոնատեղին է «Ծաղիկ»ի խմբագրատունը։

ԱՌՏՆԻՆ

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՕՐԻՆԵՑ

Մ. ՄԱՄՔՈՒՐԵԱՆ

(Երես 320, Գին 8 դահեկան)

Բազմարդիւն Հեղինակին գրչէն ելած այս եզական գործ իրաւամբ կրելով յինքեան կատարելութեան դրոշմն, կը հանդիսանայ՝ ի պէտս Հայ օրիորդաց՝ դաստիարակութեան ընտիր ուղեցոյց մը, որ հրապուրիչ ոճով կ'աւանդէ Առաքինի Տնտեսութեան կարևոր դասերն։

Դիմել Կ. Պոլիս, Էսկի Զապթիէ փողոց, Պէրպէրեան Տպարան։

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՆՈՐ

ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Ցորում կը բովանդակին 30,000 բառք, ոճք, նորաբանութիւնք, գաւառական բառք, գիտականք, արհեստականք, դիցաբանականք, եւն, եւն։

Հրատարակուած է 20րդ թերթը։ Բաժանորդագինն է կանխիկ 15 դահեկան։ Դիմել առ հեղինակն ի Պէրպէրեան տպարան։

ՓՈՒՆՋ ԳԻՏԱԿԱՆ

Գրէց

ՏՕՔԹ. Կ. ՓԱՇԱԼԵԱՆ

Ա. մասն.— Բուն, խըսլբլիկ, երպգք, մարգարէական կամ բաղդատական երազներ, քնաշրջութիւն, դամակրութիւն և հակակրութիւն։

Բ. մասն.— Սիրոյ գիտական բացատրութիւնը. գաղտնական սիրոյ ձագումը, թունաւորումն։

Գ. մասն.— Առողջապահական յօդուածք սովորութեան, մարդին կրքոյութեան, մասաւոր ախտերու և ոգելից ըմպելեաց գործածութեան վրայ։

Գին 5 ղրուշ

PAPETERIES DE VIDALON

ԹՂԹԵՂԻՆԱՑ

ՄԵԾ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՎԻՏԱԼՈՆԻ

Հիմնեալ 1597 ին ի Փարիզ, Բալէսթրօ փողոց, Թիւ 39

Դրամագլուխ 3,150,000 Ֆրանք.

Կ'արտադրէ տարին 3,000,000 քիլօկրամէն աւելի

Գրասենեկի և տպագրական զանազան տեսակ ընտիր թուղթեր, գծագրութեան թուղթ սպիտակ և զանազան գոյներով, ծծուն թուղթեր, զանազան տեսակ ստուարաթղթեր (մուխավա), լուսանկարչական թուղթեր, մագաղաթանման թուղթեր, նամակաց պահարաններ, և այլն, և այլն։

«ԾԱՂԻԿ» կը տպագրուի Վիտալոնի գործատան մէջ պատրաստուած թուղթի վրայ։

Մանրամասն տեղեկութեանց և յանձնարարութեանց համար դիմել «Ծաղիկ»ի Խմբագրատունը։

☞ ԴՐԱՄ ՇԱՀԵԼՈՒ ՄԻԱԿ ՄԻՋՈՑ

ԱՃԱՊԱՐԵՑԷՔ ՓՈՐՁԵԼ ՁԵՐ ԲԱՂԴԸ, ԵԹԷ ԿՈՒԶԷՔ ՇԱՀԻԼ

600,000 ՖՐԱՆՔ ԿԱՄ **30,000** ԴԱՂ. ՈՍԿԻ

☞ *Վճարելով միայն 7 ½ ղրուշ.* ☜

Օսմ. Կայս. Կառավարութեան երաշխաւորութեան ներքեւ գտնուող Արեւելեան Երկաթուղեայ 131րդ վիճակահանութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Նոյեմբեր 20ին, Արքունի Փողերանոցին մէջ։ 600 անձինք պիտի շահին մեծ ու փոքր զանազան պարգեւներ, 400 ֆրանքէն սկսեալ մինչեւ 600,000 ֆրանք։

Դաւառներէն եղած յանձնարարութիւնք շուտով կը կատարուին. կը բաւէ յանձնարարութեանց հետ ղրկել տոմսակի դինն 7 ½ ղրուշ եւ փոստի ծախուց համար 40 փարա աւելի։ Դրամի տեղ նամակադրոշմ (փուլ) եւս կ'ընդունուի։ Տոմսակները վաւերացեալ են Օսմ. առեւտրական նախարարութենէն։ Վիճակահանութենէն անմիջապէս յետոյ, շահող թուոց պարգեւներն իրենց հասցէներուն կը ղրկուին։ Շահող թուոց ցուցակը ԾԱՂԻԿի մէջ պիտի հրատարակուի։

Մեր Հասցէն. Առ Տնօրէնութիւն ՃԻԼԵԱՆԻ ԵՒ ԱՆՏՐԼԱ ԴՐԱՄԱՏԱՆ

Գալաթա, Գարա-Քէօյ, Թիւ 23, Կ. ՊՈԼԻՍ

ՓՈՐԱԳՐԱՏՈՒՆ

ԵՐՈՒԱՆԴ ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

Կ. Պոլիս, Ուզուն Չարշի, 402

Փորագրատանս մէջ կը փորագրուին մեծ խնամքով և փութով ամէն տեսակ կնիք և պատկեր՝ լաստիկի, փայտի, և մետաղներու վրայ, կը փորագրուին տպագրական ամէն տեսակ և ամէն լեզուէ տառերու պողպատներ, կը պատրաստուին կալվանօ կաղապարներ, զինկոյէ տառեր և թուանշաններ, և.ն. և.ն։

SALON DE COIFFURE

à la mode

Վարսավերայք ԵՕՐԿԻ և ԾՏԻՍԻԵԱ, որ տարիներէ ի վեր կը ծառայէին Վարսավիրայ Պ. Իզիտորի քով, այս անգամ վայելչապէս կահաւորուած առանձին կրպակ մը բացած լինելով ի Բերա, Մեծ փողոց, «Գօնգօրտիա» թատրոնին կարգը, Թիւ 329, կը հրաւիրեն իրենց բարեկամներն ու ծանօթներն՝ իրենց վստահութեամբ պատուել այս նոր հաստատութիւնը որ ջանք չպիտի խնայէ գոհ ընելու իւր յաճախորդները։

Նորահնար ներկ՝ մազերու, մորուքի և պեխերու համար։

ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ԵՒ ՌՈՒՍԵՐԷՆ

Լեզուաց քաջահմուտ ուսուցի մը պատրաստ է դասեր ստանձնել՝ ուսուցանելու համար սոյն լեզուները դիւրուսոյց եղանակաւ և դիւրամատչելի պայմաններով։ Դիմել «ԾԱՂԻԿ»ի Խմբագրութեան։

ՄԷՊԱՏԻԻ ԻԼՄԸ ՀՈՒԴՈՒԴ

(Սկզբունք Իրաւագիտութեան)

Այս գիրքն, զոր աշխատասիրած է Իրաւագիտական վարժարանի Նախկին շրջանաւարտ և Նիկոմիդիոյ պատժական ատենին Նախագահ Հիւսէյին Ղալիպ պէյ, խիստ օգտակար է ամէն անհատի համար, զի կը պարունակէ օսմանեան իրաւագիտութեան բոլոր հիւղերը։ Կը վաճառուի անկաղմը 10 և կազմուածը 13 ղրուշ։ Կեդրոնատեղին է Առաքել էֆէնտիի գրատունն ի Պալը Ալի Ճատտէսի։

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՓԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
Էսկի-Զապթիէ փողոց, թիւ 61